ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Մերի Տոնոյանը, Խաչիկ Մուրադյանը, Արտեմ Ստեփանյանը, Սամսոն Հարությունյանը, Անի Ղազարյանը, Անդրանիկ Բաբայանը, Արա Հարությունյանը, Գինեվան Ղազարյանը, Գևորգ Գյուրջյանը, Անահիտ Մարտիրոսյանը, Արշավիր Խաչատրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գուրգեն Հակոբյան, Արևիկ Եփրեմյան, Հասմիկ Հակոբյան, Գեղամ Հակոբյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սևակ Միքայելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար ՝ Ռոբերտ Դանիելյանը

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 11-ի N 02 նիստի օրակարգը.

1) Հրազդան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 21-ի № 200 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,

2) Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» հիմնարկի տնօրեն նշանակելու համաձայնություն տալու մասին,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին,

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու

2014 թվականի մարտի 21-ի N 29 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

5) Տեղական սոցիալական ծրագիրը հաստատելու մասին,

6) Տեղական վճարների արտոնություն կիրառելու մասին,

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կողմից իրականացվող ծրագրի մասին,

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը, հնգամյա զարգացման ծրագրի 2024 թվականի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,

9) «ԼԵՌՆԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքներ իականացնելու հանրային լսումների վերաբերյալ,

10) «ԷԴԳԱՐ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական տարածքում ջարդիչ կայանի տեղադրման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքների համար թույլտվություն ստանալու հանրային լսումների վերաբերյալ,

11) Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին,

12) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին,

13) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին,

14) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին,

15) Գումարը հետ վերադարձնելու մասին

16)Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,

17)Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,

18)Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,

19) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 220-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

20) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի 7-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի № 200 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

1.Ընդունել Հրազդան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 21-ի «Հրազդան համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» № 200 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐՏԱԿ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով.

1.Համաձայնություն տալ Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» հիմնարկի տնօրեն նշանակել Դավիթ Հովիկի Ավագյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 196 որոշման 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 1 հավելվածի:

2.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլուս» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 199 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 2 հավելվածի:

3.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 200 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 3 հավելվածի:

4.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 201 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 4 հավելվածի:

5.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 202 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 5 հավելվածի:

6.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդանի համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 203 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № 6 հավելվածի:

7.Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 205 որոշման №№20, 22 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն № № 7, 8 հավելվածների:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 29 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 21-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 29 որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14)*

ԼՍԵՑԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15)*

ԼՍԵՑԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների տեղական վճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 03-ի թիվ 2 արձանագրությունը և Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի բնակիչներ Կարինե Իսկանդարյանի 2025 թվականի հունվարի 17-ի, Արթուր Մովսեսյանի 2025 թվականի հունվարի 30-ի և Սաթենիկ Աղաջանյանի 2025 թվականի հունվարի 31-ի դիմումները.

1.Նվազեցնել Հրազդան համայնքի ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող հետևյալ երեխաների տեղական վճարները 50%-ի չափով 2025 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը.

1)Ալեն Բորիսի Սարգսյան - «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2)Գոռ Բորիսի Սարգսյան -«Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

3)Մարիա Բորիսի Սարգսյան - «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

4)Մարիամ Արթուրի Մովսեսյան- «ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» բյուջետային հիմնարկ.

5)Սամվել Ստեփանի Ցականյան- «Հրազդանի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով՝ Հրազդան համայնքի ավագանու կողմից 2024 թվականի հուլիսի 09-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 109 որոշումը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրի բյուջեն՝ համաձայն N2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով և 82.1 հոդվածի 6-րդ մասով

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2024 թվականի հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18)*

ԼՍԵՑԻՆ

«ԼԵՌՆԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԲՐՈՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՆՈԴԻՈՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 14-ին Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը.

1.«Լեռնա գրուպ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող Հրազդանի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրից օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ իրավունք ստանալու հայտին չտալ համաձայնություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19)*

ԼՍԵՑԻՆ

«ԷԴԳԱՐ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋԱՐԴԻՉ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և և հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 24-ին Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը.

1.«Էդգար Մայնինգ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական տարածքում ջարդիչ կայանի տեղադրման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքների համար թույլտվություն ստանալու հայտին տալ համաձայնություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ստորագրման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20)*

ԼՍԵՑԻՆ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածով.

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված հետևյալ հողամասերը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն.
1)Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 11-րդ փողոց 19/2 հասցեում գտնվող 388.4քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-063-0037-0039-ից),
2)Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս.Սպանդարյան փողոց 70/5 հասցեում

գտնվող 16.8քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0623-0072-ից),

3)Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս 343/2 հասցեում գտնվող 308.0քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0164-0216-ից),

4)Հրազդան քաղաքի Գործարանային փողոց 1/5 հասցեում գտնվող 1641.8քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0172-0010-ից, 07-001-0172-0013-ից),

5)Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Լ.Օրբելու փողոց 2/1 հասցեում գտնվող 1043.3քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0615-0027-ից),

6)Հրազդան քաղաքի Գործարանային փողոց 12/3 հասցեում գտնվող 255.5քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0162-0042):

7)Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող 210.5քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0655-0001):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Օնիկ Կիրակոսյանի 2025 թվականի փետրվարի 3-ի դիմումը.

1.Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 1 փողոցի թիվ 19 տան բնակիչ Օնիկ Սուրենի Կիրակոսյանին ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26092012-07-0389, տրված՝ 2012 թվականի սեպտեմբերի 26-ին) Կոտայքի մարզի համայնք Քաղսի 1-ին փողոց 23 հասցեում գտնվող 95.7քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27122024-07-0262, գաղտնաբառ՝ 5KAXDT237RDD) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի գյուղի 1-ին փողոց 23/3 հասցեում գտնվող 4.3քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը՝ 8 100 (ութ հազար մեկ հարյուր) դրամ կադաստրային արժեքով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հասմիկ Դանիելյանի 2024 թվականի հունիսի 24-ի դիմումը.

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 44 շենքի թիվ 46 բնակարանի բնակիչներ Հասմիկ Ռուբենի Դանիելյանին և Ռուբեն Տիրայրի Դանիելյանին ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել իրենց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28082023-07-0078, գաղտնաբառ՝ RA75E3FPDUZD) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 44/14 հասցեում գտնվող 29.1քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25122024-07-0014, գաղտնաբառ՝ MWBDGIIHBTYQ) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 44/74 հասցեում գտնվող 2.8քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը՝ 19 200 (տասնինը հազար երկու հարյուր) դրամ կադաստրային արժեքով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1.Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4.Սույն որոշման գործողության ժամկետը սահմանել 6 (վեց) ամիս:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՄԱՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով, որ Երևան քաղաքի Աջափնյակ, Էստոնական փողոց 13 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ Արման Աշոտի Հայրապետյանը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին մասնակցել է Հրազդանի համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդ-վաճառքին, ճանաչվել է հաղթող և վճարել է հողամասի օտարման գումարը, սակայն հողամասը կադաստրի կոմիտեում պետական գրանցում չի ստացել, քանի որ այն հանդիսանում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողամաս, ենթակա չէ օտարման՝ համաձայն գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին 2022 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-15112022-07-0002 որոշման.

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001140 հաշվեհամարին հողի օտարման համար վճարված 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) դրամ գումարը հետ վերադարձնել Երևան քաղաքի Աջափնյակ, Էստոնական փողոց 13 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչ Արման Աշոտի Հայրապետյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

1. Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 55 շենքի 52,66 քառակուսի մետր մակերեսով N7 բնակարանը (սեփականության վկայական՝ N14112024-07-0202, տրված՝ 14

նոյեմբեր 2024 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Իշխան Երվանդի Ծատուրյանին (ծնված՝ 08.08.1998 թվականին, նույնականացման քարտ՝ 015777147, տրված՝ 06.03.2023 թվականին, 049-ի կողմից):

2. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 10 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի.

1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 73 շենքի 53.93 քառակուսի մետր մակերեսով N2 բնակարանը (սեփականության վկայական՝ N03122024-07-0122, տրված՝ 3 դեկտեմբեր 2024 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Գրիշա Արշավիրի Պողոսյանին, (ծնված՝ 26.05.1957 թվականին, անձնագիր՝ AP0620129, տրված՝ 09.11.2016 թվականին, 049-ի կողմից):

2.Համասեփականատեր ճանաչել Լարիսա Սերյոժայի Վարդանյանին (ծնված՝ 18.08.1956 թվականին, անձնագիր՝ AR0229483, տրված՝ 13.03.2017 թվականին, 049-ի կողմից):

3.Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 10 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 27)*

ԼՍԵՑԻՆ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «ԶՈԴԻԱՔՍ ԻՄՊՈՒԼՍ» ժամանակակից արվեստի

ստուդիայի հիմնադիր Ստանիսլավ Իսավերդյանի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի №9794 դիմումը.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N20102023-07-0027, տրված՝ 20 հոկտեմբեր 2023 թվականին) Կենտրոն թաղամաս 73 հասցեում գտնվող թիվ 16 մանկապարտեզի առաջին հարկի չօգտագործվող 56.84քմ մակերեսով մեկ սենյակը 3 (երեք) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «ՋՈԴԻԱՔՍ ԻՄՊՈՒԼՍ» ժամանակակից արվեստի ստուդիային:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 28)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 220-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 220-Ն որոշման հավելվածը համայնքի ղեկավարի առաջարկությամբ շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 29-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2025 թվականի 7-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանել 2025 թվականի մարտի 11-ին ժամը 12:00 :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

Ավագանու անդամներ՝

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11-ի
N 11 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2025թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ավագանու (այսուհետ՝ Ավագանի) գործունեության կազմակերպումը, սահմանվում են Ավագանու աշխատանքի ընդհանուր սկզբունքները, հիմնական կանոններն ու ընթացակարգերը, ներառյալ՝ նորընտիր Ավագանու առաջին նիստի, Համայնքի ղեկավարի ընտրության և երդման արարողության կազմակերպումը, Ավագանու իրավաստեղծ գործունեության իրականացումը, Ավագանու նիստերի նախապատրաստման և անցկացման կարգը, խմբակցությունների աշխատանքի կազմակերպումը, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը, Ավագանու անդամների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու ընթացակարգը, Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու կարգը, ինչպես նաև Ավագանու գործունեության հետ կապված այլ հարցեր:

2. Ավագանին Համայնքի տեղական ինքնակառավարման մշտական ներկայացուցչական մարմինն է, որը բաղկացած է 27 անդամներից: Ավագանու անդամներն ընտրվում են համամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով: Ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը:

3. Ավագանին իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Ավագանին իրականացնում է նաև այլ նորմատիվ իրավական ակտերով, Ավագանու որոշումներով և սույն Կանոնակարգով նախատեսված գործառույթներ: Ավագանին իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և գործում է ի շահ Համայնքի և նրա անունից:

4. Ավագանին վերահսկողություն է իրականացնում Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ: Համայնքի ղեկավարը պատասխանատու է Համայնքի Ավագանու առջև:

5. Ավագանու գործունեությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) օրինականության.
2) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առաջնահերթության.
3) հարցերի կոլեկտիվ և ազատ քննարկման և լուծման.
4) գործունեության հրապարակայնության և թափանցիկության.
5) հասարակական կարծիքը հաշվի առնելու.
6) քաղաքական բազմակարծության և բազմակուսակցության.
7) օրենքի և համայնքի բնակիչների առաջ պատասխանատվության:

6. Ավագանու հիմնական գործունեությունը իրավաստեղծ գործունեությունն է: Ավագանին իր իրավասությունների շրջանակում մշակում, քննարկում և ընդունում է նորմատիվ, անհատական և լոկալ բնույթի իրավական ակտեր:

7. Ավագանին իր գործունեությունը կազմակերպում է Ավագանու անդամների, Ավագանու խմբակցությունների, մշտական և/կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

8. Ավագանու աշխատանքի հիմնական ձևը Ավագանու հերթական և արտահերթ նիստերն են, որոնցում կոլեգիալ որոշումներ են կայացվում Ավագանու իրավասության մեջ մտնող տեղական նշանակության հարցերի վերաբերյալ: Ավագանու իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերի նախնական քննարկման և նախապատրաստման համար անցկացվում են Ավագանու մշտական հանձնաժողովների նիստեր:

9. Ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է: Եթե նիստին հրավիրված անձը ելույթ է ունենում օտար լեզվով, ապա ապահովվում է դրա հայերեն թարգմանությունը:

10. Ավագանին և Համայնքի ղեկավարը գործում են իրենց նստավայրում, հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենք:

11. Ավագանու որոշմամբ Ավագանին իր գործունեությունը (ներառյալ՝ նիստերի անցկացումը) կարող է կազմակերպել այլ վայրում:

12. Համայնքի ղեկավարն Ավագանու նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում Ավագանու՝ Օրենքով և սույն Կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:

13. Ավագանու նիստում կարող է քննարկվել Համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ Ավագանին ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Համայնքի տարածքում: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասություններից դուրս հարցերի առնչությամբ Ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված Համայնքի բնակչությանը, Համայնքի ղեկավարին, մարզպետին, պետական կամ այլ մարմիններին և կազմակերպություններին:

14. Սույն Կանոնակարգի պահպանումը պարտադիր է Ավագանու բոլոր անդամների, Համայնքի ղեկավարի, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) և Ավագանու աշխատանքներին մասնակցող այլ անձանց համար:

2. ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Հերթական ընտրություններից հետո նորընտիր Ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է Ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ նախորդ Ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Ավագանու ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում, եթե նախորդ Ավագանու լիազորությունների ժամկետն ավարտվում է մինչև դատական ակտի պաշտոնական հրապարակումը, նորընտիր Ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ երրորդ օրը:

16. Համայնքների միավորման դեպքում նորընտիր Ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է Ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման կամ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ 10-րդ օրը:

17. Արտահերթ ընտրությունից հետո նորընտիր Ավագանու նիստն օրենքի ուժով հրավիրվում է Ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ 10-րդ օրը, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

18. Նորընտիր Ավագանու առաջին նիստի նախապատրաստումն, ընտրված Ավագանու անդամներին ծանուցումն, Ավագանու կանոնակարգի նախագծի և նիստին վերաբերվող այլ անհրաժեշտ նյութերի տրամադրումն ընտրված Ավագանու անդամներին, առաջին նիստի մասին հանրության իրազեկումը, զանգվածային լրատվության միջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) կողմից նիստի լուսաբանման կազմակերպումն, ինչպես նաև առաջին նիստի անցկացման համար անհրաժեշտ այլ հարցերի լուծումն իրականացնում է Աշխատակազմը:

19. Օրենքի ուժով հրավիրված նորընտիր Ավագանու առաջին նիստը գումարվում է համապատասխան օրը, ժամը 10:00-ին:

20. Աշխատակազմի ներկայացուցիչը ժամը 09:30-10:00-ն իրականացնում է Ավագանու անդամների գրանցում՝ Ավագանու անդամների ներկայության գրանցման թերթիկում (Ձև 1)[1] նրանց ստորագրությամբ: Ստացված տվյալներն ամփոփելուց հետո Աշխատակազմի քարտուղարը նիստը վարողին է փոխանցում գրանցման թերթիկը, ինչպես նաև Համայնքի Ավագանու անդամներ ընտրվելու մասին համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի արձանագրությունը:

21. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե մինչև ժամը 10:30-ը չի ապահովվում նիստի իրավազորությունը, և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Ավագանու՝ նիստին ներկայացած անդամները: Այդ դեպքում Ավագանու նիստ է հրավիրվում հաջորդ օրը՝ ժամը 10:00-ին:

22. Մինչև Համայնքի ղեկավարի ընտրվելն Ավագանու նիստը վարում է Ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

23. Նիստը վարողը հայտարարում է նիստի բացման մասին և ներկայացնում է Ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անունը, ազգանունը, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի (այսուհետ՝ կուսակցություն) անվանումը: Որից հետո հայտարարում է Ավագանու խմբակցությունների ստեղծման մասին՝ հետևյալ սկզբունքին համապատասխան՝ Ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության առաջադրմամբ ընտրված Ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

Ավագանու նիստերի դահլիճում խմբակցություններին հատկացվում են առանձին հատվածներ:

24. Նիստը վարողը հայտարարում է Ավագաու առաջին նիստի հետևյալ օրակարգը՝

1) Ավագանու կանոնակարգի ընդունում (նոր ձևավորված համայնքի դեպքում).

2) Համայնքի ղեկավարի ընտրություն.

3) Համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի քննարկում.

4) Ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրվա սահմանում:

25. Ավագանու կանոնակարգն ընդունվում է նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Կանոնակարգով կազմակերպվում է Ավագանու գործունեությունը:

---

[1] Սույն Կանոնակարգին կցվում են 1-10 Ձևերը

26. Եթե Համայնքի Ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից մեկը ստանում է Ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված Համայնքի ղեկավար: Այդ դեպքում նիստը վարողը հրապարակում է ընտրված Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը և վերջինիս հրավիրում տեղ զբաղեցնել նախագահությունում: Համայնքի ղեկավարի՝ օրենքի ուժով ընտրված լինելու փաստն ամրագրվում է նիստի արձանագրության մեջ:
Սույն կետով սահմանված դեպքում Ավագանու առաջին նիստի օրակարգում չի ընդգրկվում Համայնքի ղեկավարի ընտրության հարցը:
Եթե ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը հրաժարվում է Համայնքի ղեկավարի պաշտոնից, ապա Համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով:

27. Բաց քվեարկության միջոցով Համայնքի ղեկավար ընտրվելու արդյունքները ձևակերպվում են Ավագանու որոշմամբ, որը ստորագրում է նիստը վարողը:

28. Համայնի ղեկավար ընտրվելուց կամ օրենքի ուժով Համայնքի ղեկավար ընտրված լինելու մասին հայտարարվելուց հետո Ավագանին քննարկում է Համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերը, որոնք ամրագրվում են նիստի արձանագրության մեջ:

29. Նորընտիր Ավագանու առաջին նիստն ավարտվում է Ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրվա մասին որոշման կայացմամբ:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

30. Համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր Ավագանու առաջին նիստի ընթացքում: Առաջին նիստն անընդհատ է՝ մինչև Համայնքի ղեկավարի ընտրությունը, բացառությամբ ընդմիջման ու հանգստի համար նախատեսված ժամանակի:

31. Ընդմիջումը և հանգստի համար նախատեսված ժամանակը տրվում է նիստը վարողի կողմից: Ընդմիջումը տրվում է ժամը 14.00-15.00-ն, այնուհետև՝ յուրաքանչյուր երկու ժամը մեկ անգամ՝ 30 րոպեով, իսկ հանգստի համար նախատեսված ժամանակը տրվում է ժամը 22:00-ից հետո՝ մինչև հաջորդ օրը ժամը 09:00-ն: Ընդմիջում և հանգստի համար նախատեսված ժամանակ չի տրվում քվեարկությունների կամ դրանց արդյունքների ամփոփման ընթացքում:

32. Ավագանու խմբակցությունները կարող են իրենց կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում տեղ զբաղեցրած անձին առաջադրել որպես Համայնքի ղեկավարի թեկնածու, իսկ եթե նա հրաժարվում է, ապա խմբակցությունը կարող է առաջադրել տվյալ կուսակցության թեկնածուների ցուցակի համապատասխանաբար հաջորդ այն անձին, որը համաձայն է առաջադրվել որպես թեկնածու:

33. Նիստը վարողը առաջարկում է, որպեսզի յուրաքանչյուր խմբակցություն առաջադրի Համայնքի ղեկավարի իր թեկնածուին կամ հայտարարի խմբակցության կողմից Համայնքի ղեկավարի թեկնածու չառաջադնելու մասին:

34. Խմբակցությունների կողմից Համայնքի ղեկավարի թեկնածուների առաջադրման հաջորդականությունը որոշվում է ըստ Ավագանու ընտրությունների արդյունքներով կուսակցությունների ստացած մանդատների քանակի՝ փոքրից մեծ:

35. Խմբակցությունների կողմից առաջադրված Համայնքի ղեկավարի բոլոր թեկնածուներն՝ ըստ առաջադրման հերթականության, գրանցվում են Աշխատակազմի

քարտուղարի կողմից՝ Համայնքի ղեկավարի թեկնածուների գրանցման թերթիկում (Ձև 2), որը փոխանցվում է նիստը վարողին:

36. Նիստը վարողը հրապարակում է Համայնքի ղեկավարի թեկնածուների ցանկը, որից հետո սկսվում է քննարկումը՝ հետևյալ հաջորդականությամբ.

1) առաջադրված թեկնածուի ելույթը (առաջադրման հաջորդականությամբ).

2) հարցեր առաջադրված թեկնածուին.

3) ելույթներ.

4) առաջադրված թեկնածուի եզրափակիչ ելույթը:

37. Քննարկման ընթացքում հատկացվում է՝

1) թեկնածուի ելույթի համար՝ մինչև 15 րոպե.

2) հարց ու պատասխանի համար՝ մինչև 3-ական րոպե.

3) ելույթների և եզրափակիչ ելույթների համար՝ մինչև 5-ական րոպե.

4) վարման կարգի վերաբերյալ ելույթների համար՝ մեկական րոպե:

38. Ավագանու յուրաքանչյուր անդամին ելույթի կամ հարցի համար ձայն է տրվում մեկական անգամ:

39. Առաջադրված թեկնածուն կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև քվեարկության անցկացումը:

40. Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

41. Քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով (Ձև 3, Ձև 4), որոնք պատրաստվում են Աշխատակազմի կողմից:

42. Նիստը վարողը ներկայացնում է քվեաթերթիկի ձևանմուշը և քվեարկելու կարգը:

43. Քվեաթերթիկներում՝ ըստ առաջադրման հերթականության, ընդգրկվում են գրանցված թեկնածուների անուններն ու ազգանունները: Քվեաթերթիկում թեկնածուի անվան, ազգանվան կողքին տեղադրվում է մեկ վանդակ, իսկ գրանցված միայն մեկ թեկնածու լինելու դեպքում՝ երկու վանդակ, որոնցից մեկի դիմաց նշվում է «ԿՈՂՄ ԵՄ», իսկ մյուսի դիմաց «ԴԵՄ ԵՄ» բառերը: Քվեաթերթիկում տպագրվում է քվեարկությանը մասնակցող Ավագանու անդամի անունը, ազգանունը, որի կողքին նախատեսվում է դաշտ՝ վերջինիս ստորագրության համար:

44. Ավագանու անդամը քվեաթերթիկը լրացնում է՝ դնելով «V» նշանը այն թեկնածուի անվան, ազգանվան կողքի վանդակում, ում օգտին ցանկանում է քվեարկել, իսկ քվեաթերթիկում մեկ թեկնածուի անուն, ազգանուն նշված լինելու դեպքում՝ դնում է «V» նշանը «ԿՈՂՄ ԵՄ» վանդակում, եթե ցանկանում է կողմ քվեարկել այդ թեկնածուին կամ «ԴԵՄ ԵՄ» վանդակում, եթե ցանկանում է դեմ քվեարկել այդ թեկնածուին:

45. Աշխատակազմի ներկայացուցիչը համակարգչում զետեղված քվեաթերթիկի ձևանմուշի միջոցով տպագրում է նիստին ներկա Ավագանու անդամների թվին համապատասխան անվանական քվեաթերթիկներ՝ դասավորելով դրանք ըստ Ավագանու անդամների ներկայության գրանցման թերթիկի հերթականության և դրանք փոխանցում է նիստը վարողին:

46. Նիստը վարողը հայտարարում է քվեարկության սկիզբը և հերթականությամբ հնչեցնում է Ավագանու անդամի անունը, ազգանունը: Ավագանու անդամը մոտենում է նիստը վարողին, ստանում է իր անվանական քվեաթերթիկը, կատարում է իր ընտրությունը, ստորագրում է քվեաթերթիկի վրա, այն հանձնում է նիստը վարողին և զբաղեցնում իր տեղը:

47. Քվեաթերթիկը քվեարկության համար սույն Կանոնակարգով սահմանված կարգին համապատասխան չլրացնելու դեպքում (չսահմանված ձևի նշում, վնասում, ջնջում), Ավագանու անդամի պահանջով այն խոտանվում է և նրան տրամադրվում է նոր քվեաթերթիկ:

48. Նիստը վարողի կողմից քվեարկության ավարտը հայտարարելուց հետո սկսվում է քվեարկության արդյունքների ամփոփումը, որի համար յուրաքանչյուր խմբակցությունից մեկական ներկայացուցչի հրավիրում է մասնակցելու քվեարկության արդյունքները հաշվելու և ամփոփելու գործընթացին:

49. Անվավեր են համարվում չսահմանված նմուշի քվեաթերթիկները, ինչպես նաև այն քվեաթերթիկները, որոնք լրացվել են սահմանված պահանջների խախտմամբ, այդ թվում՝ քվեարկվել է միաժամանակ մի քանի թեկնածուի օգտին կամ մեկ թեկնածուի դեպքում միաժամանակ նշումներ են կատարվել «ԿՈՂՄ ԵՄ» և «ԴԵՄ ԵՄ» վանդակներում կամ որևէ նշում չի կատարվել կամ քվեաթերթիկը ստորագրված չէ:

50. Նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները և հայտարարում՝

1) Համայնքի ղեկավար ընտրվելու մասին (եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու և նրանցից մեկը ստանում է Ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը) կամ.

2) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին (եթե առաջադրված թեկնածուներից որևէ մեկը չի ստանում Ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը):

51. Քվեարկության երկրորդ փուլին մասնակցում են առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուները: Եթե հավասար ձայների պատճառով հնարավոր չէ պարզել առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա երկրորդ փուլին մասնակցում են նաև հավասար ձայներ ստացած մյուս թեկնածուները:

52. Քվեարկության երկրորդ փուլում Համայնքի ղեկավար է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն:

53. Նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները և հայտարարում՝

1) Համայնքի ղեկավար ընտրվելու մասին կամ.

2) լրացուցիչ քվեարկություն անցկացնելու մասին (մեկից ավելի թեկնածուների՝ հավասար առավելագույն ձայներ ստանալու դեպքում):

54. Լրացուցիչ քվեարկության արդյունքով Համայնքի ղեկավար է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն, իսկ ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է տարիքով ավագին:

55. Քվեարկության երկրորդ փուլն ու լրացուցիչ քվեարկությունն անցկացվում են անմիջապես հիմնական քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո՝ բաց քվեարկությամբ, առաջին փուլի համար սույն Կանոնակարգով սահմանված ընթացակարգին համապատասխան:

56. Եթե առաջադրվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է Համայնքի ղեկավար, եթե նրա օգտին կողմ քվեարկած ձայներն ավելի են դեմ քվեարկած ձայների թվից և ավելի են Ավագանու անդամների ընդհանուր թվի 40 տոկոսից:

57. Նիստը վարողը նորընտիր Համայնքի ղեկավարի անունը, ազգանունը հայտարարելուց հետո նրան տալիս է ելույթի հնարավորություն մինչև 10 րոպե ժամանակով:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

58. Նորընտիր Համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացույցային օրը, Ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Համայնքի բնակիչներին տրված երդմամբ:

59. Համայնքի ղեկավարի երդման արարողության նիստի նախապատրաստումն իրականացնում է Աշխատակազմը:

60. Համայնքի ղեկավարի երդման արարողության նպատակով հրավիրած նիստը տեղի է ունենում Ավագանու նստավայրում, ժամը 11.00-ին: Աշխատակազմի ներկայացուցիչը ժամը 10.30 - 11.00-ն գրանցում է Ավագանու անդամներին:

61. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե մինչև ժամը 11:30-ը չի ապահովվում նիստի իրավազորությունը, և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Ավագանու՝ նիստին ներկայացած անդամները: Այդ դեպքում Ավագանու նիստ է հրավիրվում հաջորդ օրը՝ ժամը 11:00-ին:

62. Նիստին կարող են ներկա գտնվել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, հրավիրվել պետական, հասարակական, մշակութային, կրոնական կազմակերպությունների գործիչներ, պատվավոր հյուրեր:

63. Նիստը վարում է Ավագանու նիստին ներկա՝ տարիքով ավագ անդամը:

64. Նիստը վարողը Համայնքի ղեկավարի երդման արարողությանը նվիրված Ավագանու նիստը հայտարարում է բացված, ներկայացնում է նիստի օրակարգը՝ Համայնքի ղեկավարի երդման արարողություն, որից հետո ամբիոնի մոտ է հրավիրում ընտրված Համայնքի ղեկավարին:

65. Ամբիոնին մոտենալուց հետո՝ ընտրված Համայնքի ղեկավարն արտասանում է երդման տեքստը.

«Ստանձնելով Հրազդան համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.
Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

66. Երդումն արտասանելուց հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Համայնքի ղեկավարը ստորագրում է երդման տեքստի տակ, որն ի պահ է հանձնվում Աշխատակազմին:

67. Համայնքի ղեկավարը հանդես է գալիս ելույթով: Ելույթից հետո Համայնքի ղեկավարը զբաղեցնում է նախագահողի տեղը և շարունակում վարել նիստը: Պաշտոնապես իր պարտականությունները ստանձնած Համայնքի ղեկավարին ողջույնի խոսք են ուղղում հրավիրված պաշտոնատար անձինք և պատվավոր այլ հյուրեր:

68. Ողջույնի խոսքերից հետո Համայնքի ղեկավարը հայտարարում է նիստը փակված:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

69. Ավագանու հետ հարաբերություններում Համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) ներկայացնում է Համայնքը և Ավագանին այլ անձանց և մարմինների հետ հարաբերություններում.

2) հրավիրում և վարում է Ավագանու նիստերը.

3) Ավագանու նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում Ավագանու, Ավագանու խմբակցությունների, Ավագանու մշտական և ժամանակավոր հանձնաժողովների՝

Օրենքով, ինչպես նաև սույն Կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար.

4) ներկայացնում է հարցեր Ավագանու նիստի օրակարգի նախագծում ընդգերկելու համար.

5) Ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ հրապարակում է Ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը.

6) նախաձեռնում է Ավագանու արտահերթ նիստերի գումարում.

7) ստորագրում է իր վարած նիստերի ընթացքում Ավագանու ընդունած որոշումներն, ուղերձները, հայտարարությունները և նիստերի արձանագրությունները.

8) Ավագանու նիստերին մասնակցելու, ելույթներ ունենալու և հարցերին պատասխանելու նպատակով կարող է հրավիրել այլ անձանց.

9) Ավագանու որոշումների վերաբերյալ եռօրյա ժամկետում Ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով, եթե ավագանու որոշումը, իր կարծիքով, հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին կամ Ավագանու նախկին որոշումներին.

10) Ավագանու որոշումները կարող է բողոքարկել դատական կարգով.

11) իր իրավասությունների շրջանակում կազմակերպում է Ավագանու որոշումների կատարման ապահովումը.

12) համակարգում է Ավագանու մշտական և ժամանակավոր հանձնաժողովների գործունեությունը.

13) Ավագանու գործունեության կազմակերպման, նիստերի նախապատրաստման և անցկացման հարցերի հետ կապված ընդունում է որոշումներ, արձակում է կարգադրություններ և տալիս հանձնարարականներ.

14) աջակցում է Ավագանու անդամներին իրենց գործունեության իրականացման ընթացքում, կազմակերպում է անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրումը Ավագանու անդամներին.

15) իր իրավասությունների շրջանակում Ավագանու հետ հարաբերություններում իրականացնում է նաև այլ գործառույթներ:

6. ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

70. Ավագանու խմբակցություններն օրենքի ուժով ստեղծվում են նորընտիր Ավագանու առաջին նստաշրջանի առաջին նիստում: Խմբակցությունների գործունեությունը կարգավորվում է Օրենքով, սույն Կանոնակարգով, Խմբակցության կանոնադրությամբ և Ավագանու որոշումներով:

71. Խմբակցությունները ստեղծվում են տվյալ գումարման Ավագանու լիազորությունների ժամկետի համար և հանդիսանում են նրա կառուցվածքի մասը:

72. Խմբակցության ղեկավարը, նորընտիր Համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո եռօրյա ժամկետում Համայնքի ղեկավարին ուղղված գրությանը կից ներկայացնում է խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք Համանքի ղեկավարը կամ Ավագանու նիստը վարողը հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում:

73. Համայնքապետարանի նիստերի դահլիճում կամ Ավագանու որոշած այլ վայրում Համայնքի ղեկավարը խմբակցություններին ապահովում է կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցված առանձին աշխատասենյակներով:

74. Ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին և Համայնքի ղեկավարին: Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից:

75. Խմբակցության ղեկավարի և/կամ քարտուղարի փոփոխության, խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման մասին խմբակցության ղեկավարը գրավոր տեղեկացնում է Համայնքի ղեկավարին՝ այդ հանգամանքների առաջացման օրվանից հետո հնգօրյա ժամկետում: Համայնքի ղեկավարը կամ Ավագանու նիստը վարողը այդ մասին հայտարարում է Ավագանու առաջիկա նիստում:

76. Մինչև յոթ անդամ ունեցող խմբակցությունն իր հայեցողությամբ կարող է ունենալ մեկ գործավար, յոթից ավելի անդամ ունեցող խմբակցությունը՝ մեկ գործավար և մեկ փորձագետ, որոնք աշխատանքի են ընդունվում որոշակի ժամկետով կնքված պայմանագրով՝ համապատասխան խմբակցության ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, աջակցում են խմբակցության և դրա անդամների աշխատանքին, ինչպես նաև Ավագանու այն մշտական հանձնաժողովի աշխատանքներին, որի նախագահ է ընտրվել տվյալ խմբակցության անդամը: Խմբակցության փորձագետի և գործավարի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի համար ժամկետն առաջարկում է խմբակցության ղեկավարը, որը չի կարող ավել լինել խմբակցության գործունեության ժամկետից:

77. Խմբակցության փորձագետի և գործավարի պաշտոնային դրույքաչափը սահմանում է Ավագանին՝ Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին որոշմամբ:

78. Խմբակցության փորձագետի և գործավարի թեկնածուներին ներկայացվող կրթության, փորձառության, հմտությունների և այլ պահանջները սահմանվում են խմբակցության կանոնադրությամբ:

79. Խմբակցության փորձագետի և գործավարի հետ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրերով սահմանվում են՝

1) փորձագետի և գործավարի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները,

2) փորձագետի և գործավարի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովման, տեխնիկայի և նյութերի տրամադրման պայմանները,

3) փորձագետին և գործավարին հանձնարարականներ տալու և դրանց կատարման որակը գնահատելու իրավասություն ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները:

80. Խմբակցության փորձագետի և գործավարի աշխատանքային ռեժիմի, ինչպես նաև աշխատանքային կարգապահության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Աշխատակազմի կարգապահական ներքին կանոններով:

81. Խմբակցության փորձագետ ունենալու անհրաժեշտության դեպքում խմբակցության ղեկավարը գրավոր դիմում է Համայնքի ղեկավարին՝ ներկայացնելով փորձագետի թեկնածուի տվյալները: Համայնքի ղեկավարն՝ առաջարկությունը ստանալուց հետո, մեկշաբաթյա ժամկետում խմբակցության փորձագետի թեկնածուի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր որոշակի ժամկետով:

82. Խմբակցության գործավար ունենալու անհրաժեշտության դեպքում խմբակցության ղեկավարը գրավոր դիմում է Աշխատակազմի քարտուղարին՝ ներկայացնելով գործավարի

թեկնածուի տվյալները: Աշխատակազմի քարտուղարն՝ առաջարկությունը ստանալուց հետո, մեկշաբաթյա ժամկետում խմբակցության գործավարի թեկնածուի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր որոշակի ժամկետով:

83. Օրենսդրությամբ նախատեսված կամ տեղական ինքնակառավարման խնդիրներին առնչվող այլ հարցերի լուծման նպատակով ձևավորվող հանձնաժողովների և աշխատանքային խմբերի (Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների, աճուրդային, մրցութային, սոցիալական, գույքագրման, վերահսկողական և այլ) կազմերում ընդգրկելու նպատակով Ավագանու խմբակցության անդամների թեկնածուներ ներկայացնելու համար Համայնքի ղեկավարի գրությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում խմբակցությունների ղեկավարները Համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնում են իրենց խմբակցության անդամների թեկնածուներին:

7. ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

84. Ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, ստեղծում է մշտական, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:

85. Մշտական հանձնաժողովները ստեղծվում են Ավագանու իրավասության մեջ մտնող հարցերի քննարկման և նախապատրաստման, իրավաստեղծ աշխատանք իրականացնելու, Ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող որոշումների նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման, դրանց վերաբերյալ Ավագանուն եզրակացություններ, կարծիքներ տալու, ինչպես նաև Ավագանու ընդունած որոշումների կատարման նկատմամբ հսկողություն կազմակերպելու նպատակով:

86. Նորընտիր Ավագանու մշտական հանձնաժողովները ստեղծվում են Համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց հետո քսանօրյա ժամկետում, տվյալ գումարման Ավագանու լիազորությունների ժամկետի համար և հանդիսանում են նրա կառուցվածքի մասը:

87. Մշտական հանձնաժողովների թիվը որոշում է Ավագանին՝ հաշվի առնելով նրա գործունեության հիմնական ուղղությունները: Ավագանին կարող է ստեղծել 3-5 մշտական հանձնաժողովներ: Մշտական հանձնաժողովները կարող են կազմված լինել 5-9 անդամից: Հանձնաժողովների անդամների քանակական կազմը որոշելիս հիմք է ընդունվում Ավագանու անդամների թիվը՝ այն հաշվարկով, որ Ավագանու յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունենա ընդգրկվելու որևէ մշտական հանձնաժողովի կազմում: Ավագանու անդամը կարող է ընդգրկվել ոչ ավելի, քան երկու մշտական հանձնաժողովի կազմում: Ավագանու՝ միաժամանակ երկու մշտական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է Ավագանու կազմում փոքրաթիվ ներկայացվածություն ունեցող խմբակցության անդամներին:

88. Նորընտիր Համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո հնգօրյա ժամկետում Ավագանու խմբակցությունների ղեկավարներին գրավոր առաջարկում է ներկայացնել թեկնածուներ՝ Ավագանու մշտական հանձնաժողովներում ընդգրկելու նպատակով: Գրությանը կից ներկայացվում է ստեղծվող հանձնաժողովների անվանումները, դրանց իրավասությունների շրջանակը և յուրաքանչյուր հանձնաժողովում Ավագանու անդամների քանակական կազմը սահմանող նախագիծ:

89. Համայնքի ղեկավարի գրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում խմբակցությունների ղեկավարները գրավոր ներկայացնում են իրենց խմբակցության

անդամների թեկնածուներին՝ Ավագանու մշտական հանձնաժողովներում ընդգրկելու նպատակով:

90. Եթե սահմանված ժամկետում հանձնաժողովների կազմերում ընդգրկելու համար որևէ խմբակցություն չի ներկայացնում իր անդամների թեկնածուներին, կամ խմբակցությունը չի ներկայացնում իր բոլոր անդամներին, ապա Համայնքի ղեկավարն իր հայեցողությամբ մշտական հանձնաժողովների կազմերում ընդգրկում է Ավագանու այն անդամներին, ում թեկնածությունները չեն ներկայացվում խմբակցություններից:

91. Մշտական հանձնաժողովները կարող են լինել՝

1) զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, միջնաժամկետ ծախսերի ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի, Համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագրի, բյուջեի, վարկերի, փոխառությունների, տեղական հարկերի, տուրքերի, վճարների, առևտրի, սպասարկման և այլ ֆինանսատնտեսական հարցերով).

2) քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է ճարտարապետության, քաղաքային և գյուղական բնակավայրերի քաղաքաշինության, հողային ֆոնդի օգտագործման և պահպանման, ընդերքօգտագործման, գյուղատնտեսության, գովազդի, բնակարանային ֆոնդի և այլ անշարժ գույքին վերաբերվող հարցերով).

3) կրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական և այլ հարակից հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդության, սպորտի, առողջապահության, շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, մայրության և մանկության, հաշմանդամության, աշխատանքի, զբաղվածության, հասարակայնության հետ և արտաքին կապերի հարցերով).

4) համայնքային կազմակերպություններին և ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքային հիմնարկներին առնչվող, ճանապարհաշինության, էներգետիկ, ջրային, կապի և այլ հաղորդակցությունների, կոմունալ տնտեսության հարցերով).

5) իրավական հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է համայնքային խնդիրների համակարգային լուծման նպատակով մշակված կանոնակարգերի, կանոնադրությունների, ընթացակարգերի, կանոնների, կարգերի և այլ իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման և քննարկման հարցերով):

92. Համայնքի ղեկավարը և նրա առաջին տեղակալը կարող են չընդգրկվել մշտական հանձնաժողովների կազմերում:

93. Համայնքի ղեկավարը մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմերը հաստատելու մասին որոշման նախագիծը ներկայացնում է Ավագանու հաստատմանը:

94. Ավագանու գործունեության ընթացքում, անհրաժեշտության դեպքում Ավագանին կարող է փոփոխություններ կատարել մշտական հանձնաժողովների անհատական կազմերում, ինչպես նաև վերանվանել, վերակազմավորել կամ ստեղծել այլ մշտական հանձնաժողովներ՝ Ավագանու գործունեության նոր ոլորտներում: Այդ դեպքերում նոր հանձնաժողովի անհատական կազմը ձևավորվում է Ավագանու համապատասխան որոշում ընդունելու նախաձեռնության օրվանից հետո քսանօրյա ժամկետում՝ սույն Կանոնակարգի 88-89-րդ կետերով սահմանված ընթացակարգին համապատասխան:

95. Մշտական հանձնաժողովների լիազորություններն ու գործունեության կարգը սահմանվում են սույն Կանոնակարգով և հանձնաժողովների կողմից ընդունվող աշխատակարգերով:

96. Մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին Ավագանու որոշման ընդունման օրվանից հետո հնգօրյա ժամկետում գումարվում են հանձնաժողովների առաջին նիստերը, որոնց ժամանակ հանձնաժողովների կազմերից ընտրվում են հանձնաժողովների նախագահներն ու քարտուղարները և ընդունվում են հանձնաժողովների աշխատակարգերը:

97. Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Նախագահի և քարտուղարի ընտրության մասին գրավոր տեղեկացվում է Համայնքի ղեկավարը, որն այդ մասին հայտարարում է Ավագանու առաջիկա նիստում: Համայնքի ղեկավարին է ներկայացվում նաև հանձնաժողովի աշխատակարգի օրինակը:

98. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե՝

1) Օրենքով սահմանված կարգով դադարել են նրա՝ որպես Ավագանու անդամի լիազորությունները.

2) նա տվել է հրաժարական հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

99. Հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարականի դիմումը քննարկվում է տվյալ հանձնաժողովի նիստում: Այդ նույն նիստում հանձնաժողովի կազմից ընտրվում է նոր նախագահ: Նախագահի փոփոխության մասին գրավոր տեղեկացվում է Համայնքի ղեկավարը, որն այդ մասին հայտարարում է Ավագանու առաջիկա նիստում:

100. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե Օրենքով սահմանված կարգով դադարել են նրա՝ որպես Ավագանու անդամի լիազորությունները:

101. Եթե հանձնաժողովի նախագահը կամ անդամը Օրենքով սահմանված կարգով դուրս են գալիս հանձնաժողովի կազմում իրենց թեկնածությունն առաջադրած խմբակցությունից, ապա նրանք կարող են շարունակել հանձնաժողովում իրենց գործունեությունը՝ որպես անկախ Ավագանու անդամ: Այդ փոփոխության մասին գրավոր տեղեկացվում է Համայնքի ղեկավարը, որն այդ մասին հայտարարում է Ավագանու առաջիկա նիստում:

102. Հանձնաժողովների նախագահները և անդամները, անհրաժեշտության դեպքում, փոխադարձ համաձայնությամբ, կարող են փոխատեղել իրենց մասնակցությունը հանձնաժողովների կազմերում: Այդ նպատակով նրանք գրավոր դիմում են Համայնքի ղեկավարին, ինչի հիման վրա վերջինս Ավագանու հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովների անհատական կազմերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծ:

103. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

2) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստեր.

3) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

4) քննարկվող հարցերի վերաբերյալ Ավագանու նիստի ժամանակ ներկայացնում է հանձնաժողովի կարծիքները, եզրակացություններն ու առաջարկությունները.

5) ընթացք է տալիս և պատասխանում հանձնաժողովին ուղղված դիմումներին.

6) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

104. Ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես քննարկվեն Ավագանու իրավասու հանձնաժողովներում: Իրավասու հանձնաժողովը Ավագանու այն մշտական հանձնաժողովն է, որի իրավասությանն է վերաբերում նիստի օրակարգում ընդգրկվող հարցի քննարկումը:

105. Համայնքի ղեկավարը՝ Ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ արտահերթ նիստ նախաձեռնելուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, մշտական հանձնաժողովների թվից նշանակում է իրավասու հանձնաժողովներ:

106. Համայնքի ղեկավարն Ավագանու իրավասու մշտական հանձնաժողովներին որոշելուց հետո, այդ մասին անմիջապես իրազեկում է համապատասխան հանձնաժողովների նախագահներին և կազմակերպում հանձնաժողովների նիստերի անցկացման համար անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովումը և համապատասխան փաստաթղթերի ու նյութերի տրամադրումը: Իրազեկումը կարող է իրականացվել ինչպես թղթային տարբերակով, այնպես էլ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ՀԿՏՀ) միջոցով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցների կիրառմամբ:

107. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում Ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ: Այդ մասին հանձնաժողովի նախագահը տեղյակ է պահում Համայնքի ղեկավարին:

108. Մշտական հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի որոշած օրերին և ժամերին՝ Ավագանու հերթական նիստի օրվան նախորդող յոթօրյա, իսկ արտահերթ նիստի օրվան նախորդող՝ երկօրյա ժամկետում:

109. Հանձնաժողովի արտահերթ նիստ կարող է գումարվել ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում և օրակարգով:

110. Ավագանու նիստի ընթացքում արգելվում է հանձնաժողովի նիստի գումարումը:

111. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Նիստը վարում է հանձնաժողովի նախագահն, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

112. Համայնքի ղեկավարը, նրա առաջին տեղակալը, ինչպես նաև Ավագանու յուրաքանչյուր անդամ իրավունք ունեն մասնակցել մշտական հանձնաժողովների ցանկացած նիստի, քննարկվող հարցի վերաբերյալ հարցեր տալ, ներկայացնել առաջարկություններ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

113. Այն դեպքում, երբ հանձնաժողովի նիստում քննարկվելիք որոշման նախագծի, հարցի կամ նախաձեռնության հեղինակը Համայնքի ղեկավարն է, խմբակցությունը, Ավագանու անդամը կամ Համայնքի նախաձեռնող բնակիչները, ապա հանձնաժողովի նիստին հեղինակի փոխարեն կարող է որպես զեկուցող հանդես գալ նրանց ներկայացուցիչը:

114. Հանձնաժողովի նիստին կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք: Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երկու օր առաջ՝ հանձնաժողովի քարտուղարի միջոցով:

115. Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը կազմում է հանձնաժողովի նախագահը՝ նշանակելով նիստի օրը և ժամը, որի մասին իրազեկվում են հանձնաժողովի անդամները:

116. Հանձնաժողովի նիստում ընդունված եզրակացությունները (կարծիքները) ստորագրում են հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստը վարողը, և հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

117. Ավագնու նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իրավասու հանձնաժողովների ընդունած եզրակացություններն (կարծիքներն), Ավագանու նիստից առնվազն մեկ օր առաջ հանձնաժողովների քարտուղարները գրավոր հանձնում են Աշխատակազմի քարտուղարին, ով դրանք կցում է Ավագանու նիստի օրակարգի նյութերին:

118. Ավագանու նիստում յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Ավագանու

նիստին ներկա մշտական հանձնաժողովի տարիքով ավագ անդամը, այդ հարցի վերաբերյալ ներկայացնում է հանձնաժողովի ընդունած եզրակացությունը (կարծիքը):

119. Մշտական հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նիստը վարողը և արձանագրողը:

120. Հանձնաժողովի անդամը նիստին ներկայանալու անհնարինության դեպքում այդ մասին նախապես տեղյակ է պահում հանձնաժողովի նախագահին:

121. Անհրաժեշտության դեպքում (չնախատեսված իրավիճակներով պայմանավորված) մշտական հանձնաժողովները կարող են նիստեր անցկացնել հեռավար եղանակով՝ տեսաժողովի միջոցով, կամ հանձնաժողովի նիստին կարող են առցանց եղանակով մասնակցել հանձնաժողովի այն անդամներն, ովքեր հարգելի պատճառներով հնարավորություն չեն ունեցել ներկայանալու, սակայն ցանկություն են հայտնել հեռավար կարգով մասնակցելու նիստին:

122. Ավագանու մի քանի մշտական հանձնաժողովների իրավասության մեջ մտնող հարցերը կարող են նախապատրաստվել և քննարկվել նրանց կողմից համատեղ:

123. Մշտական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների գործառույթները, նիստում հարցերի քննարկման և քվեարկության, համատեղ նիստերի անցկացման, հեռավար եղանակով նիստերի անցկացման, հանձնաժողովի անդամների բացակայությունների հաշվառման կարգերը և հանձնաժողովի գործունեությունը կարգավորող այլ ընթացակարգերը սահմանվում են հանձնաժողովի աշխատակարգով:

124. Անհրաժեշտության դեպքում Ավագանին կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց կազմը, խնդիրները, լիազորությունների շրջանակը, ժամկետները և աշխատակարգը սահմանվում են Ավագանու որոշմամբ:

125. Ժամանակավոր հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Ավագանու խմբակցությունների անդամներ, Աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներ, Համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, Ավագանու խմբակցությունների փորձագետներ, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ անձիք:

126. Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են տեղական ինքնակառավարման ոլորտի առանձին հարցերի նախնական քննարկման կամ որոշակի խնդիրների, իրադարձությունների, փաստերի մասին Ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ, կարծիքներ, վերլուծություններ ներկայացնելու նպատակով:

127. Ժամանակավոր հանձնաժողովի գործունեության արդյունքների մասին հանձնաժողովի նախագահը սահմանված ժամկետում զեկույց է ներկայացնում Ավագանու նիստում: Հանձնաժողովի անդամները, ովքեր ունեն հատուկ կարծիք, իրավունք ունեն այդ մասին հայտարարել Ավագանու նիստում:

128. Ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքի արդյունքների մասին զեկույցը խորհրդատվական է: Ժամանակավոր հանձնաժողովի զեկույցի հիման վրա Ավագանին կարող է որոշում կայացնել:

129. Ժամանակավոր հանձնաժողովը դադարեցնում է իր գործունեությունը սահմանված ժամկետում իրեն հանձնարարված խնդիրները կատարելուց հետո կամ ժամկետից շուտ:

8. ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՎ ՆԻՍՏԵՐԸ

130. Ավագանու հերթական նստաշրջանը գումարվում է փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին:

131. Ավագանու աշխատանքի հիմնական ձևը նրա նիստերն են: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ Ավագանու իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ Ավագանու նիստում ընդունվում են նորմատիվ և այլ իրավական ակտեր՝ որոշումների տեսքով: Ավագանու նիստում կարող են ընդունվել նաև ուղերձներ և հայտարարություններ:

132. Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է Ավագանու առնվազն մեկ նիստ:

133. Ավագանու նիստերը կարող են լինել հերթական և արտահերթ, դռնբաց և դռնփակ, իսկ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված կարող են հրավիրվել Ավագանու հեռավար եղանակով նիստեր՝ տեսաժողովի միջոցով:

134. Ավագանու դռնբաց նիստերն անցկացվում են հրապարակային և առցանց հեռարձակվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում: Հրապարակային նիստերը կարող են լուսաբանվել ՁԼՄ-ներով:

135. Նիստերի օրերը որոշում է Ավագանին՝ յուրաքանչյուր նիստի ժամանակ սահմանելով հաջորդ նիստի գումարման օրը:

136. Հերթական նիստերը, որպես կանոն, սկսվում են ժամը 11:00-ին, եթե այլ ժամ չի սահմանվում Ավագանու որոշմամբ, և կարող են տևել մինչև ժամը 18:00-ն: Ընդմիջում հայտարարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը վարողի կողմից: Նիստի ժամանակը սպառվելու պատճառով, եթե հնարավոր չի լինում քննարկել օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը և Ավագանին իր որոշմամբ չի երկարաձգում նիստի տևողությունը, ապա օրակարգի մնացած հարցերի քննարկումը շարունակվում է հաջորդ աշխատանքային օրը՝ սույն կետում սահմանված ժամերին:

137. Ավագանու նիստերը հրավիրում և վարում է Համայնքի ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը:

138. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե նիստի նշանակված ժամից հետո կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Ավագանու՝ նիստին ներկայացած անդամները: Իսկ եթե նիստի իրավազորությունն ապահովվում է, սակայն կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում Համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է Ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

139. Ավագանու իրավազորությունն ապահովելու համար նիստի մեկնարկից 30 րոպե առաջ, Աշխատակազմի ներկայացուցիչը սկսում է Ավագանու անդամների գրանցումը՝ Ավագանու անդամների ներկայության գրանցման թերթիկում (Ձև 1) նրանց ստորագրությամբ: Ստացված տվյալներն ամփոփելուց հետո Աշխատակազմի քարտուղարը նիստը վարողին է փոխանցում գրանցման թերթիկը: Անհրաժեշտության դեպքում ընդմիջումներից հետո և քվեարկություններից առաջ կարող է իրականացվել Ավագանու իրավազորության ստուգում (կրկնակի գրանցում):

140. Ավագանու նիստերի դահլիճում քվեարկությունների համար նախատեսված էլեկտրոնային համակարգի առկայության դեպքում նիստին ներկայացած Ավագանու

անդամների գրանցումը կատարվում է նիստը վարողի հայտարարությամբ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:

141. Հեռավար եղանակով անցկացվող Ավագանու նիստերին մասնակցելու համար Ավագանու անդամների գրանցումը, տվյալների ամփոփումը և նիստը վարողին գրանցման արդյունքների մասին ծանուցումը իրականացնում է Աշխատակազմի ներկայացուցիչը՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

142. Ավագանու անդամները պարտավոր են մասնակցել Ավագանու նիստերին:

143. Համայնքի ղեկավարի տեղակալները իրավունք ունեն մասնակցելու Ավագանու նիստերին, արտահերթ ելույթ ունենալու, ինչպես նաև պատասխանելու հարցերին:

144. Ավագանու նիստերին Համայնքի ղեկավարի կամ Ավագանու խմբակցությունների հրավերով կարող են մասնակցել, ելույթներ ունենալ և պատասխանել հարցերին նաև Աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցները, ինչպես նաև այլ անձինք: Հրավիրված անձանց ցուցակը նիստից առնվազն երկու օր առաջ փոխանցվում է Աշխատակազմի քարտուղարին, ով անմիջապես ծանուցում է հրավիրված անձանց՝ Ավագանու նիստին մասնակցելու համար:

145. Համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները մասնակցում են Համայնքի Ավագանու նիստերին և իրավունք ունեն առաջարկություններ ներկայացնել Ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ:

146. Քաղաքացիները, կազմակերպությունների և ՀԼՄ-ների ներկայացուցիչները, ովքեր ցանկություն են հայտնում Ավագանու հերթական հրապարակային նիստի ժամանակ ներկա գտնվել նիստերի դահլիճում, կարող են Համայնքի ղեկավարին ուղղված գրավոր դիմում ներկայացնել համայնքապետարան կամ այն ուղարկել Աշխատակազմի էլեկտրոնային փոստի հասցեով: Դիմումում նշվում են՝ ազգանունը, անունը, հայրանունը, բնակության հասցեն, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հեռախոսի համարը, իսկ ՀԼՄ-ների դեպքում՝ նաև լրագրողի լիազորությունները հաստատող փաստաթղթի տվյալները: Դիմումների գրանցումն ավարտվում է Ավագանու նիստին նախորդող օրը՝ ժամը 16:00-ին: Ստացված դիմումները ներկայացվում են Համայնքի ղեկավարին՝ Ավագանու նիստի ընթացքում նիստերի դահլիճում դիմողների ներկայության հնարավորության վերաբերյալ քննարկման և որոշում կայացնելու համար:

147. Ավագանու նիստի ժամանակ նիստերի դահլիճում քաղաքացիների, կազմակերպությունների և ՀԼՄ-ների ներկայացուցիչների ներկայության հնարավորությունը որոշվում է հաշվի առնելով սանիտարական նորմերի և կանոնների, հրդեհային անվտանգության պահանջների պահպանման, դահլիճում ազատ տեղերի առկայության, ինչպես նաև Ավագանու անդամների և դահլիճում ներկա այլ անձանց անվտանգության ապահովման նկատառումները:

148. Ավագանու նիստիերի դահլիճում ներկա գտնվելու թույտվություն ստացած անձանց անուններն ընդգրկվում են Ավագանու նիստին մասնակցելու համար հրավիրվածների ցուցակում, որը ստորագրում է Համայնքի ղեկավարը: Ցուցակը տեղադրվում է Համայնքի պաշտոնական համացանցային կայքի հայտարարությունների բաժնում և փակցվում է համայնքապետարանի վարչական շենքի տեղեկատվական ստենդի վրա՝ Ավագանու նիստին նախորդող օրը մինչև ժամը 18.00-ն: Հրավիրված անձանց ցուցակը Ավագանու նիստի ժամանակ հրապարակում է նիստը վարողը:

149. Ավագանու նիստի ժամանակ այցը համայնքապետարանի վարչական շենք իրականացվում է մուտքի սահմանված ռեժիմի համաձայն: Նիստի օրը անձանց թույլատրվում է մուտք գործել նիստերի դահլիճ՝ համաձայն հրավիրված անձանց հաստատված ցուցակի՝ նրանց ինքնությունը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ: Հրավիրված անձինք

դահլիճում զբաղեցնում են իրենց համար նախատեսված տեղերը և պարտավոր են պահպանել սույն Կանոնակարգով սահմանված կարգը և կարգապահության կանոնները: Ավագանու նիստի մեկնարկից առաջ ՀԼՄ-ների ներկայացուցիչները տեղեկացնում են նիստը վարողին նիստի ընթացքում աուդիո ձայնագրման, տեսանկարահանման և լուսանկարահանման մասին, որի մասին հայտարարում է նիստը վարողը:

9. ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

150. Ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է Համայնքի ղեկավարի, խմբակցությունների, Ավագանու անդամների, բնակավայրերի վարչական ղեկավարների կողմից Աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ տրամադրած գրավոր հարցերից: Հարցերի նախաձեռնողները Աշխատակազմի քարտուղարին են տրամադրում որոշման նախագիծը, նախագծի ընդունման հիմնավորումը, նախագծի ընդունման դեպքում Համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքը, եթե նախագծի ընդունմամբ նախատեսվում է բյուջետային ծախսեր, ապա կցվում է նաև ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև՝ ամփոփաթերթ՝ նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների հետևանքով ստացված առարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման պատճառների վերաբերյալ: Փաստաթղթերի փաթեթի էլեկտրոնային տարբերակն Աշխատակազմի քարտուղարին է ուղարկվում ՀԿՏՀ-ի միջոցով կամ թղթային փաթեթին կցվում է փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի կրիչը:

151. Ավագանու քննարկմանը ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, մինչև Ավագանու նիստի օրակարգի նախագծում ընդգրկելը, Աշխատակազմի կողմից ներկայացվում են հանրային քննարկման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում հրապարակման եղանակով, ինչպես նաև, Ավագանու հաստատած՝ Համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան քննարկումներ կազմակերպելու միջոցով:

152. Ավագանու նիստի օրակարգի ձևավորված նախագիծն Աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է Համայնքի ղեկավարին: Ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ Համայնքի ղեկավարն՝ Աշխատակազմի քարտուղարի միջոցով, ապահովում է օրակարգի նախագծի հրապարակումը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվում են Համայնքի ղեկավարի, Ավագանու և վարչական ղեկավարների նստավայրում, տարածվում զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում և հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում:

153. Ավագանու անդամներին նիստի օրակարգում ընդգրկված նախագծերը և դրանց կից փաստաթղթերը տրամադրվում են հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ: Նույն ժամկետում նիստի օրակարգում ընդգրկված նախագծերը և դրանց կից փաստաթղթերը տեղադրվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ:

154. Ավագանու հերթական նիստի օրակարգում ընդգրկված նախագծերի և դրանց կից փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթը Ավագանու անդամներին ուղարկվում է նրանց կողմից Աշխատակազմին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներին կամ ուղարկվում է ՀԿՏՀ-ի միջոցով, իսկ Ավագանու անդամների ցանկության դեպքում՝ փաստաթղթերի փաթեթը առձեռն տրամադրվում է Ավագանու նստավայրում՝ թղթային տարբերակով:

155. Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև Համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են Համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են Համայնքի ղեկավարին՝ Ավագանու կողմից ընդունված՝ Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգին համապատասխան: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է Ավագանու նիստում ոչ ուշ, քան Համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը Ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

10. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԸ

156. Ավագանու արտահերթ նիստ գումարվում է Համայնքի ղեկավարի կամ Ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ: Ավագանու անդամները գրավոր դիմում են Աշխատակազմի քարտուղարին՝ Ավագանու արտահերթ նիստի նախաձեռնության ձևաթուղթ (Ձև 5) տրամադրելու խնդրանքով: Ձևաթուղթը համարակալվում է և կնքվում Աշխատակազմի կնիքով: Աշխատակազմի քարտուղարի կողմից ձևաթուղթը (նաև դրա էլեկտրոնային տարբերակը) տրամադրվում է այդ մասին դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան երկօրյա ժամկետում: Նշված ժամկետում ձևաթուղթ չտրամադրելու դեպքում՝ այն ինքնուրույն կազմում է Ավագանու անդամը (անդամները)՝ սույն կետի պահանջների պահպանմամբ: Ձևաթղթում նշվում են նախաձեռնողների անուն, ազգանուն, հայրանունները, նրանց ստորագրությունները, արտահերթ նիստի օրակարգը և անցկացման ժամկետը, ինչպես նաև կցվում են օրակարգային հարցերի նախագծերը: Ձևաթուղթը Համայնքի ղեկավարին ներկայացնելուց հետո փոփոխման ենթակա չէ: Եթե ձևաթուղթը ստացման պահից 48 ժամվա ընթացքում անհրաժեշտ թվով Ավագանու անդամների ստորագրություններով հանձնվում է Համայնքի ղեկավարին, ապա նա գումարում է արտահերթ նիստ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում: Ձևաթուղթը սահմանված ժամկետում Համայնքի ղեկավարին չներկայացնելու դեպքում համարվում է մարված:

157. Աշխատակազմի քարտուղարը վարում է Ավագանու արտահերթ նիստի նախաձեռնության ձևաթղթերի մատյան (Ձև 6), որի էջերը համարակալվում են և կարվում:

158. Ավագանու արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում, սակայն նախաձեռնությունից ոչ շուտ, քան երեք օրից: Արտահերթ նիստեր կարող են գումարվել նաև հերթական նստաշրջաններից դուրս:

159. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի նախագծերը և դրանց կցված փաստաթղթերը Ավագանու անդամներին, իրավասու մշտական հանձնաժողովին տրամադրվում են արտահերթ նիստը նախաձեռնելուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝ սույն Կանոնակարգի 154-րդ կետով սահմանված ընթացակարգով: Նույն ժամկետում այդ նյութերը պետք է տեղադրվեն Համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

160. Արտահերթ նիստն անցկացվում է հերթական նիստերի համար սույն Կանոնակարգով սահմանված կարգով:

161. Ավագանու արտահերթ նիստերում քննարկվող որոշումների նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են հերթական նիստերի համար սահմանված համանման պահանջներ:

11. ԱՎԱԳԱՆՈՒ ԴՌՆՓԱԿ ՆԻՍՏԸ

162. Բացառիկ դեպքերում, Ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր և քննարկումներ:

163. Դռնփակ նիստում, բացի Ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից, իրավունք ունեն ներկա գտնվել միայն Ավագանու որոշմամբ հրավիրված անձինք:

164. Հառավար եղանակով դռնփակ նիստեր կամ քննարկումներ չեն անցկացվում:

165. Ավագանու դռնփակ նիստին մասնակցելու իրավունք չունեցող անձինք պարտավոր են լքել նիստերի դահլիճը դռնփակ նիստի ընթացքում:

166. Ավագանու դռնփակ նիստը Համայնքի պաշտոնական համացանցային կայքում առցանց չի հեռարձակվում: Ավագանու դռնփակ նիստի արձանագրությունը չի հրապարակվում, իսկ նիստում ընդունված որոշումների եզրափակիչ մասերը հրապարակվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

167. Ավագանու դռնփակ նիստի ընթացքում արգելվում է օգտագործել լուսանկարչական և տեսանկարահանող սարքեր, հեռախոսային և ռադիոկապի, ինչպես նաև ձայնագրման և տեսահսկման սարքավորումներ: ՁԼՄ-ների ներկայացուցիչներին չի թույլատրվում ներկա գտնվել Ավագանու դռնփակ նիստին:

168. Եթե դռնփակ նիստում քննարկվող հարցը պարունակում է պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ապա այդ հարցի նախագծի նախապատրաստումը, նիստում ընդունված որոշման, ինչպես նաև նիստի արձանագրության պահպանումը, վերարտադրումը, փոխանցումը և դրանց հասանելիությունը կատարվում են գաղտնի գործավարության համար սահմանած կանոնների համաձայն:

169. Ավագանու դռնփակ նիստը նախագահողը նիստի սկզբում ծանուցում է Ավագանու անդամներին և հրավիրված անձանց դռնփակ նիստի անցկացման կանոնների մասին և զգուշացնում է պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ պարունակող տեղեկատվության հրապարակման և տարածման համար պատասխանատվության մասին:

12. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

170. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ: Օրակարգը հաստատվում է Ավագանու որոշմամբ:

171. Օրակարգում ընդգրկված հարցերը քննարկվում և քվեարկվում են ըստ օրակարգում դրանց ներկայացման հաջորդականության՝ առանձին-առանձին:

172. Ավագանու որոշմամբ, նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, կարող է սահմանվել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման այլ հերթականություն կամ օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստերի քննարկմանը:

173. Նիստը վարողը՝

1) բացում և փակում է Ավագանու նիստը,

2) ղեկավարում է Ավագանու նիստի ընդհանուր ընթացքը, ապահովում է սույն Կանոնակարգի պահանջների կատարումը,

3) ձայն է տալիս զեկուցողներին և համազեկուցողներին,

4) հարցերի և ելույթների համար ձայն է տալիս Ավագանու անդամներին,

5) ձայն է տալիս նիստին հրավիրված անձանց,

6) հայտնում է Ավագանուն ուղղված գրավոր դիմումների, հայտարարությունների և տեղեկատվական նյութերի մասին,

7) Ավագանու որոշում պահանջող հարցերի վերաբերյալ կազմակերպում է քվեարկություն և ձայների հաշվարկ, հրապարակում է քվեարկության արդյունքները,

8) ապահովում է Ավագանու արձանագրային և կազմակերպչական որոշումների կատարումը,

9) Ավագանու նիստի անցկացման հետ կապված հանձնարարականներ է տալիս Աշխատակազմի աշխատակիցներին,

10) ստորագրում է Ավագանու նիստի արձանագրությունը և դրանում ընդունված որոշումները,

11) ընդհատում է նիստը, եթե նիստերի դահլիճում կարգուկանոն ապահովելն անհնար է դառնում,

12) միջոցներ է ձեռնարկում Ավագանու կարգազանց անդամների և նիստին ներկա այլ անձանց նկատմամբ:

174. Կարգազանց են համարվում Ավագանու այն անդամները կամ նիստին ներկա անձինք, ովքեր նիստի ընթացքում ելույթ են ունենում առանց նիստը վարողի թույլտվության, աղմկում են, թույլ տալիս կոպիտ, վիրավորական արտահայտություններ, որոնք վնասում են Ավագանու անդամների և այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը, կոչ են անում անօրինական գործողությունների, օգտագործում են կեղծ տեղեկություններ կամ որևէ մեկի հասցեին անհիմն մեղադրանքներ են ներկայացնում, չեն կատարում նիստը վարողի օրինական պահանջները կամ այլ գործողություններով խաթարում նիստի բնականոն ընթացքը:

175. Ավագանու նիստի ընթացքում բջջային հեռախոսների ձայնային ազդանշանը պետք է անջատված լինի:

176. Ավագանու կարգազանց անդամի նկատմամբ նիստը վարողը ձեռնարկում է հետևյալ միջոցները.

1) զգուշացնում է՝ հրապարակելով անունը և ազգանունը,

2) անջատում է խոսափողը,

3) մեկ նիստում զրկում է հարց տալու և ելույթով հանդես գալու իրավունքից,

4) հեռացնում է նիստերի դահլիճից՝ մինչև տվյալ նիստի ավարտը:

177. Ավագանու հրապարակային նիստերի առցանց հեռարձակումը կարող է ընդհատվել նիստը վարողի հանձնարարությամբ՝ նիստի բնականոն ընթացքը սույն կանոնակարգի 174-րդ կետում թվարկված գործողությունների հետևանքով խաթարվելու դեպքում:

178. Նիստի բնականոն ընթացքն ապահովելու համար նիստը վարողը, անհրաժեշտության դեպքում, իրավունք ունի դիմել ոստիկանություն, այդ թվում՝ Ավագանու կարգազանց անդամին կամ այլ անձանց նիստերի դահլիճից հեռացնելու նպատակով:

179. Նիստի ընթացքում նիստը վարողն իրավունք չունի մեկնաբանել քննարկվող հարցի էության վերաբերյալ Ավագանու անդամների ելույթները:

180. Որպես հիմնական զեկուցող ելույթ է ունենում տվյալ հարցի հեղինակը: Այն դեպքում, երբ քննարկվող հարցի հեղինակը Համայնքի ղեկավարն է, խմբակցությունը, Ավագանու անդամը կամ Համայնքի նախաձեռնող բնակիչները, ապա հեղինակի փոխարեն կարող է որպես զեկուցող հանդես գալ նրանց ներկայացուցիչը:

181. Որպես հարակից զեկուցող հանդես է գալիս այն իրավասու մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը, որի իրավասությանն է վերաբերում տվյալ հարցի քննարկումը:

182. Եթե քննարկման դրված իրավական ակտի նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, ապա հիմնական զեկուցողը հրապարակում է նաև այդ իրավական ակտի նախագծի վերաբերյալ պետական-իրավական փորձաքննության եզրակացությունը:

183. Եթե հարցի քննարկումն ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից այն ընդմիջվել էր:

184. Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝

1) զեկուցման համար՝ մինչև 20 րոպե.

2) հարցերի և պատասխանների համար՝ մինչև 5-ական րոպե.

3) արձագանքի համար՝ մինչև 2 րոպե.

4) ելույթների համար՝ մինչև 5 րոպե.

5) եզրափակիչ ելույթի համար՝ մինչև 10 րոպե,

6) վարման կարգի վերաբերյալ ելույթների համար՝ մեկական րոպե:

185. Եթե հարցը տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:

186. Ավագանու անդամներին հնարավորություն է տրվում մեկ անգամ հարց տալու յուրաքանչյուր զեկուցողին:

187. Ավագանու անդամները ելույթ ունենալու կամ հարց տալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ դրա համար հերթագրվում են: Հերթագրումն իրականացնում է Աշխատակազմի ներկայացուցիչը և տվյալները փոխանցում նիստը վարողին: Իսկ Ավագանու նիստերի դահլիճում քվեարկությունների համար նախատեսված էլեկտրոնային համակարգի առկայության դեպքում հերթագրումը կատարվում է նիստը վարողի հայտարարությամբ, էլեկտրոնային համակարգով՝ տասը վայրկյանի ընթացքում:

188. Ելույթ ունեցողները կամ հարց տվողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ՝ ըստ հերթագրման հաջորդականության:

189. Նիստը վարողը դադարեցնում է սահմանված ժամանակը գերազանցող Ավագանու անդամի ելույթը կամ հարցը՝ հատկացված ժամանակի ավարտից մեկ րոպե առաջ նախազգուշացնելով այդ մասին:

190. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով և սույն Կանոնակարգով:

191. Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող նախագիծը, ճշտում է դրա ձևակերպումը և հիշեցնում է, թե ձայների ինչ քանակով կարող է ընդունվել որոշումը:

192. Քվեարկությունն իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ: Ավագանու անդամը կարող է քվեարկել միայն անձամբ՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ ձևով՝ այդ նպատակով տասը վայրկյան բարձրացրած պահելով ձեռքը: Ձայները հաշվում է նիստը վարողը:

193. Քվեարկության ժամանակ ձայների արագ և ճշգրիտ հաշվարկն ապահովելու համար, ինչպես նաև նիստում ընդունված որոշումների ձևակերպման և նիստի արձանագրության մեջ Ավագանու յուրաքանչյուր անդամի քվեարկության արդյունքները ճշգրիտ գրանցելու նպատակով կարող է օգտագործվել քվեարկությունների համար նախատեսված հատուկ ձևաթուղթ (Ձև 7): Քվեարկությունների ժամանակ ձևաթղթի կիրառումն իրականացվում է Աշխատակազմի ներկայացուցչի միջոցով:

194. Ավագանու նիստերի դահլիճում քվեարկությունների համար նախատեսված էլեկտրոնային համակարգի առկայության դեպքում՝ Ավագանու անդամը քվեարկում է նիստը վարողի հայտարարությամբ, էլեկտրոնային համակարգի միջոցով՝ տասը վայրկյանի ընթացքում:

195. Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները և դրանց համապատասխան հայտարարում է՝ որոշումն ընդունվել է կամ չի ընդունվել.

196. Ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած Ավագանու անդամների ազգանունները: Ավագանու որոշումը ստորագրում է նիստը վարողը:

197. Ավագանու նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը: Նիստը կարող է ընդհատվել Ավագանու որոշմամբ կամ Օրենքով նախատեսված դեպքերում: Ավագանու նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:

198. Ավագանու որոշումների նախագծերը և ընդունված որոշումները հրապարակվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում, բացառությամբ Ավագանու դռնփակ նիստերի ժամանակ ընդունվող որոշումների:

199. Ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Պաշտոնական հրապարակումն ապահովում է Աշխատակազմի քարտուղարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական www.arlis.am կայքում հրապարակելու միջոցով:

200. Ավագանու հայտարարությունները և ուղերձները մեկշաբաթյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Համայնքի ղեկավարը: Հրապարակումն իրականացվում է Համայնքի պաշտոնական համացանցակին կայքում տեղադրելու միջոցով:

201. Ավագանու նիստերն արձանագրվում են, իսկ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված հեռավար եղանակով նիստերի հրավիրման դեպքում՝ նաև տեսաձայնագրվում:

202. Ավագանու ընթացակարգային հարցերի վերաբերյալ նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ ընդունվում են արձանագրային որոշումներ, որոնք գրանցվում են Ավագանու նիստի արձանագրության մեջ:

203. Ընթացակարգային որոշումներ կարող են ընդունվել՝

1) նիստի ընդմիջումների կամ հետաձգման մասին.

2) նիստի օրակարգից հարցը հանելու կամ այլ նիստի օրակարգ տեղափոխելու մասին.

3) նիստի օրակարգային հարցի շուրջ քննարկումները հետաձգելու կամ դադարեցնելու մասին.

4) օրակարգային հարցերի քննարկման հերթականությունը փոխելու մասին.

5) ելույթի համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու մասին.

6) նիստին հրավիրված անձանց ձայն տալու մասին.

7) Ավագանու անդամների լրացուցիչ գրանցում անցկացնելու մասին.

8) այլ ընթացակարգային հարցերի մասին:

204. Նիստերի արձանագրումը, իսկ հեռավար նիստի դեպքում՝ նաև տեսաձայնագրումն, ապահովում է Աշխատակազմի քարտուղարը:

205. Ավագանու նիստերի արձանագրությունները ստորագրում են նիստը վարողը, Ավագանու նիստին մասնակցած անդամները և նիստն արձանագրողը, իսկ հեռավար նիստի դեպքում՝ Ավագանու նիստի արձանագրությունն ստորագրում է նիստը վարողը՝

արձանագրությանը կցելով նիստի տեսաձայնագրությունը, իսկ Ավագանու անդամները նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ արտահայտած իրենց դիրքորոշումը էլեկտրոնային փոստով ներկայացնում են Աշխատակազմին: Դիրքորոշման տպագրված տարբերակը կցվում է նիստի արձանագրությանը:

206. Նիստերի ավարտից հետո՝ յոթ օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները ստորագրվում են նիստին ներկա Ավագանու անդամների կողմից:

207. Ավագանու նիստերի արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում տեղադրվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ, բացառությամբ Ավագանու դռնփակ նիստերի արձանագրությունների:

208. Ավագանու որոշումների և նիստերի արձանագրությունների համարակալումը սկսվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա սկզբից՝ թիվ 1-ով: Ավագանու հերթական և արտահերթ նիստերի արձանագրությունները համարակալվում են շարունակաբար:

209. Ավագանու հրապարակային նիստերի ժամանակ ընդունված որոշումները, ուղերձներն ու հայտարարությունները կարող են հրապարակվել ՀԼՄ-ներով կամ այլ կերպ՝ հասարակայնությանն առավել մատչելի դարձնելու նպատակով:

210. Եթե Ավագանու հերթական նիստի ժամանակ նիստերի դահլիճում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք ցանկանում են դիմել Ավագանուն օրակարգային հարցերի կամ համայնքային խնդիրների վերաբերյալ, պետք է իրենց հարցադրումները կամ առաջարկությունները գրավոր ներկայացնեն Աշխատակազմի քարտուղարին՝ նախքան նիստի սկսվելը: Աշխատակազմի քարտուղարը դրանք տրամադրում է նիստը վարողին՝ ըստ ստացման հերթականության: Նիստը վարողը հարցադրումների կամ առաջարկությունների հեղինակներին լսելու հարցը ներկայացնում է Ավագանու որոշմանը:

211. Եթե նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ որոշվում է թույլատրել հարցադրումները և առաջարկությունները, ապա նիստի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝ հարց ու պատասխանի համար: Համայնքի ղեկավարը հերթականությամբ ձայն է տալիս հարցադրումների կամ առաջարկությունների հեղինակներին և դրանց պատասխանելու կամ արձագանքելու համար ցանկություն հայտնած Ավագանու անդամներին:

13. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

212. Ավագանու անդամի իրավունքները սահմանված են Օրենքով և այլ օրենքներով: Ավագանու անդամի պարտականություններն ու գործառույթները սահմանված են Օրենքով, այլ օրենքներով և սույն Կանոնակարգով:

213. Ավագանու անդամն իրավունք ունի՝

1) առաջարկություններ ներկայացնելու Ավագանու նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերալ.

2) նախապատրաստելու և Ավագանու քննարկմանը ներկայացնելու հարցեր, որոշումների նախագծեր.

3) Համայնքի ղեկավարից պահանջելու և ստանալու նրա, Աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև Համայնքի բնակավայրերին վերաբերվող տեղեկատվություն.

4) կատարելու Համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ.

5) Ավագանու և Համայնքի ղեկավարի որոշումները կամ գործողությունները բողոքարկել դատարան, եթե խախտվել են նրա՝ որպես Ավագանու անդամի իրավունքները.

6) վարչական ղեկավարից պահանջելու և ստանալու նրա գործունեության վերաբերյալ տեղեկատվություն.

214. Ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց՝ իր ցանկությամբ և Ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում: Ծախսերի փոխհատուցում ստանալու ցանկություն հայտնած Ավագանու անդամը գրավոր դիմում է Համայնքի ղեկավարին՝ դիմումին կցելով իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր: Ստացված դիմումների հիման վրա Համայնքի ղեկավարը հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում Ավագանու որոշման նախագիծ՝ Ավագանու անդամի կատարած ծախսերի փոխհատուցման մասին: Փոխհատուցման ամսական չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամյա պատգամավորական ծախսերի 30 տոկոսը:

215. Համայնքի ղեկավարը Համայնքի բնակիչների ընդունելության, ինչպես նաև հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ է հատկացնում Ավագանու անդամին:

216. Ավագանու անդամը պարտավոր է՝

1) իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և Համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով.

2) մասնակցել Ավագանու նիստերին և քվեարկություններին.

3) պարբերաբար հանդիպել բնակչության հետ, նրանց տեղեկացնել Ավագանու աշխատանքների մասին.

4) մասնակցել Ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.

5) սույն Կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել Ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.

6) օժանդակել Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.

7) հեռավար եղանակով անցկացվող Ավագանու նիստի տեսաձայնագրման ընթացքում բանավոր արտահայտել իր դիրքորոշումը, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով հաստատել այն.

8) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախման իրավիճակում չմասնակցել Ավագանու որոշումների քվեարկությանը և այդ մասին գրավոր տեղյակ պահել Ավագանուն կամ Համայնքի ղեկավարին.

9) անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել Համայնքի ղեկավարին.

10) ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը.

11) մասնակցել վերապատրաստման դասընթացներին.

12) իրականացնել Օրենքով, այլ օրենքներով և սույն Կանոնակարգով սահմանված այլ պարտականություններ:

217. Ավագանու անդամի այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները սահմանվում են Օրենքով:

218. Ավագանու անդամների և Աշխատակազմի միջև արդյունավետ և օպերատիվ հաղորդակցություն ապահովելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը արագ կազմակերպելու նպատակով Ավագանու անդամներն Աշխատակազմի քարտուղարին են տրամադրում իրենց էլեկտրոնային փոստի հասցեներն ու հեռախոսահամարները:

Ավագանու անդամներն Աշխատակազմի ներկայացուցչի միջոցով գրանցվում են որպես ՀԿՏՀ օգտագործողներ և ստանում համակարգից օգտվողի մուտքանուն և գաղտնաբառ:

219. Ավագանու նիստից կամ քվեարկություններից բացակայելու մասին Ավագանու անդամը նախապես տեղեկացնում է Աշխատակազմի քարտուղարին՝ նշելով բացակայության պատճառը: Աշխատակազմի քարտուղարն Ավագանու նիստի սկզբում հրապարակում է Ավագանու անդամի բացակայության պատճառը, որն արձանագրվում է:

220. Ավագանու նիստերից կամ քվեարկությունից բացակայության պատճառի մասին սույն Կանոնակարգով սահմանված կարգով Ավագանու անդամի կողմից Աշխատակազմի քարտուղարին չտեղեկացնելու դեպքում՝ բացակայությունը համարվում է անհարգելի, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հետագայում հիմնավորում է իր բացակայությունների հարգելի լինելու հանգամանքները:

221. Մշտական հանձնաժողովների նախագահները յուրաքանչյուր նստաշրջանի ավարտին Աշխատակազմի քարտուղարին են ներկայացնում հանձնաժողովների նիստերից Ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք, որտեղ նշվում են բացակայությունների պատճառները:

222. Ավագանու նիստերից կամ քվեարկություններից կամ հանձնաժողովի նիստերից բացակայությունները կարող են համարվել հարգելի, եթե Ավագանու անդամը հիմնավորում է հիվանդության, գործուղման մեջ գտնվելու, Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու, անձնական, ընտանեկան կամ աշխատանքային արտակարգ իրավիճակների հետ կապված հանգամանքները:

223. Աշխատակազմի քարտուղարը վարում է Ավագանու անդամների բացակայությունների հաշվառման մատյան (Ձև 8), որի հիման վրա յուրաքանչյուր նստաշրջանի ավարտին Համայնքի ղեկավարին տեղեկանք է ներկայացնում Ավագանու նիստերից կամ քվեարկություններից կամ հանձնաժողովի նիստերից Ավագանու անդամների բացակայությունների մասին, որը հրապարակվում է Ավագանու հերթական նստաշրջանի առաջին նիստում:

14. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ

224. Ավագանու անդամն իր գործունեությունն իրականացնելիս հետևում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված բարեվարքության պահանջներին:

225. Ավագանու անդամի բարեվարքությունը ներառում է.

1) վարքագծի սկզբունքները,

2) պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումները,

3) անհամատեղելիության պահանջները,

4) շահերի բախումը,

5) այլ սահմանափակումները:

226. Ավագանու անդամն իր վարքագիծը դրսևորելիս հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) հանրությանը ծառայելու գիտակցումը,

2) հավատարմությունը հանրային շահին,

3) բարեկրթությունը և հարգալիրությունը,

4) բարեխղճությունը,

5) օբյեկտիվությունը:

227. Իր լիազորություններն իրականացնելիս Ավագանու անդամը գործում է ի շահ Համայնքի բնակիչների և ի նպաստ հանրության բարօրության: Իր շփումներում Ավագանու անդամը դրսևորում է իր պաշտոնին վայել վարքագիծ, բարեկիրթ վերաբերմունք, գործում է ազնիվ և բարեխիղճ, դրսևորում է անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:

15. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐՈՒՄԸ

228. Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) դադարել են Ավագանու լիազորությունները.

2) նա կորցրել է Ավագանու ընտրական իրավունքը.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.

4) նա Ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.

5) նա Ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել Համայնքի ղեկավարին.

6) նա հրաժարական է տվել:

229. Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է:

230. Սույն Կանոնակարգի 228-րդ կետով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին ենթակետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա Համայնքի ղեկավարը կազմում է Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

231. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը անձամբ ներկայացնում է Համայնքի ղեկավարին, որն այն հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում: Ավագանու անդամի կողմից իր դիմումն անձամբ Համայնքի ղեկավարին ներկայացնելու անհնարինության դեպքում հրաժարականի դիմումը ներկայացնում է խմբակցության ղեկավարը կամ Ավագանու անդամի ներկայացուցիչը:

232. Մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած Ավագանու անդամի մանդատը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ՝ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում տրվում է այդ կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդող թեկնածուին: Եթե վերջինս հրաժարվում է մանդատից, ապա նա հանվում է թեկնածուների ցուցակից: Եթե ցուցակում այլ թեկնածու չկա, ապա այդ մանդատը մնում է թափուր:

233. Եթե Ավագանու անդամը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է Ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից, Համայնքի ղեկավարը հաջորդ նստաշրջանի առաջին հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում Ավագանու որոշման նախագիծ՝ Ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին, որն ընդունվում է Ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Որոշման նախագծին կցվում են նիստերից կամ քվեարկություններից կամ հանձնաժողովի նիստերից Ավագանու անդամի բացակայությունների արձանագրված պատճառները:

234. Յուրաքանչյուր Ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը քննարկվում է առանձին՝ սույն Կանոնակարգով սահմանված կարգով:

16. ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

235. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է վաղաժամկետ դադարեցնել Ավագանու լիազորությունները,

1) եթե՝

ա. հերթական նստաշրջանի ընթացքում Ավագանու նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում.

բ. հերթական նստաշրջանի ընթացքում Ավագանին երեք ամսից ավելի իր քննարկած հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում.

գ. Ավագանին հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում Համայնքի ղեկավարի ներկայացրած արտահերթ քննարկման ենթակա նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում:

2) Սույն կետով սահմանված դեպքերում Համայնքի ղեկավարը կազմում է արձանագրություն, որը ներկայացնում է մարզպետի աշխատակազմ:

236. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է Ավագանու լիազորությունները, եթե «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ կամ 142.3-րդ հոդվածով սահմանված կարգով նիստը գումարելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Համայնքի ղեկավար չի ընտրվում: Այդ դեպքերում Ավագանին կազմում է արձանագրություն, որը ստորագրում են նիստին ներկա Ավագանու անդամները: Արձանագրությունը Աշխատակազմի քարտուղարն ուղարկում է մարզպետի աշխատակազմ:

237. Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նշանակում է Ավագանու արտահերթ ընտրություններ:

238. Ավագանին շարունակում է իր լիազորությունների իրականացումը մինչև նորընտիր Ավագանու առաջին նիստը:

239. Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ավագանին իրավունք չունի նշանակելու տեղական հանրաքվե, անվստահություն հայտնելու Համայնքի ղեկավարին, ընդունելու կամ փոփոխելու Համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը:

17. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

240. Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացվում է Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարելու հիմքով այդ պաշտոնը թափուր մնալու դեպքում:

241. Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են,

1) եթե նա՝

ա. կորցրել է Ավագանու անդամի ընտրական իրավունքը.

բ. Համայնքի ղեկավարի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

գ. հրաժարական է տվել.

դ. կորցրել է Ավագանու անդամի լիազորությունը.

ե. ստացել է այլ երկրի քաղաքացիություն.

զ. մահացել է.

2) սույն կետով սահմանված հանգամանքների առաջացման հիմքերը ներկայացվելուց հետո Ավագանին կազմում է արձանագրություն:

242. Համայնքի ղեկավարի պաշտոնը թափուր մնալուց հետո Ավագանու սահմանած ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում անցկացվում է Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն: Արտահերթ ընտրության օրը նշանակվում է Ավագանու որոշմամբ:

243. Արտահերթ ընտրության ժամանակ Համայնքի ղեկավարի թեկնածուներ առաջադրում են Ավագանու խմբակցությունները:

244. Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունն անցկացվում է սույն Կանոնակարգի 33-57-րդ կետերով սահմանված ընթացակարգով:

245. Նորընտիր Համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպվում է սույն Կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված կարգով:

246. Համայնքի ղեկավարը, անկախ իր ընտրության ժամկետից, պաշտոնավարում է մինչև Ավագանու լիազորությունների ժամկետի ավարտը:

18. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

247. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու որոշման նախագիծ կարող է ներկայացնել Ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Որոշման նախագիծը ներառում է Ավագանու այն անդամի անունը, ազգանունը, որին նախաձեռնող խումբն առաջադրում է որպես Համայնքի ղեկավարի թեկնածու: Որոշման նախագիծը պետք է ստորագրեն նախաձեռնող խմբի բոլոր անդամները:

248. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծը հանձնվում է Համայնքի ղեկավարին, ինչպես նաև Ավագանու խմբակցությունների ղեկավարներին, ովքեր այդ մասին անհապաղ տեղեկացնում են իրենց խմբակցությունների անդամներին:

249. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացվելուց հետո՝ 36 ժամվա ընթացքում, նախաձեռնող խմբի մեջ չմտնող Ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կարող է ևս ներկայացնել Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ՝ առաջադրելով Համայնքի ղեկավարի այլ թեկնածու:

250. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին, օրենքի ուժով հրավիրվում է Ավագանու նիստ, որում գաղտնի քվեարկությամբ որոշվում է Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցը:

251. Քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ քվեաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում է Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծով առաջադրված թեկնածուն, իսկ եթե այդպիսի նախագծերը մեկից ավելի են, ապա համապատասխան քանակով թեկնածուները:

252. Գաղտնի քվեարկությունը կազմակերպում է նիստը վարողը՝ Աշխատակազմի օժանդակությամբ:

253. Գաղտնի քվեարկության քվեաթերթիկները (Ձև 9, Ձև 10) Աշխատակազմի ներկայացուցիչը տպագրում է Ավագանու նիստին ներկա անդամների քանակով և կնքում Աշխատակազմի կնիքով: Քվեաթերթիկները և Ավագանու անդամների ցուցակը Աշխատակազմի ներկայացուցիչը տրամադրում է նիստը վարողին:

254. Մինչև քվեարկությունը սկսելը, Աշխատակազմի ներկայացուցիչն Ավագանու անդամների ներկայությամբ փակում է քվեատուփը և կնքում Աշխատակազմի կնիքով: Քվեատուփը զետեղվում է Ավագանու նիստերի դահլիճում՝ բոլորի համար տեսանելի վայրում:

255. Աշխատակազմը պայմաններ է ստեղծում Ավագանու անդամների գաղտնի քվեարկելու համար:

256. Նիստը վարողը ներկայացնում է քվեաթերթիկի ձևանմուշը և քվեարկելու կարգը:

257. Քվեարկության սկիզբը հայտարարելուց հետո, նիստը վարողը գաղտնի քվեարկության քվեաթերթիկը Ավագանու անդամին է հանձնում ըստ ցուցակի, որտեղ վերջինս ստորագրում է իր անվան դիմաց:

258. Յուրաքանչյուր Ավագանու անդամ քվեարկում է անձամբ և ունի մեկ ձայնի իրավունք:

259. Ավագանու անդամը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի քվեարկության համար հարմարեցված տարածքում, որից հետո ծալված քվեաթերթիկը գցում է քվեատուփի մեջ:

260. Քվեարկության ավարտը հայտարարելուց հետո նիստը վարողը՝ Աշխատակազմի ներկայացուցչի օժանդակությամբ, բացում է գաղտնի քվեարկության տուփը, դուրս է բերում քվեաթերթերկները և հաշվում ձայները, որի համար յուրաքանչյուր խմբակցությունից մեկական ներկայացուցչի հրավիրում է մասնակցելու քվեարկության արդյունքները հաշվելու և ամփոփելու գործընթացին:

261. Համայնքի ղեկավարին անվստահություն է հայտնվում, եթե առաջադրված թեկնածուն (թեկնածուներից մեկը) ստանում է Ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

262. Քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝

1) նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները և հայտարարում՝

ա. Համայնքի ղեկավար ընտրվելու և գործող Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին կամ.

բ. Համայնքի ղեկավարին անվստահություն չհայտնելու մասին:

2) սույն կետի 1-ի ենթակետով սահմանված դեպքում Ավագանին ընդունում է որոշում՝ գաղտնի քվեարկության արդյունքներով Համայնքի ղեկավար ընտրվելու և գործող Համայնքի ղելավարին անվստահություն հայտնելու մասին:

3) սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքում Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը համարվում է չընդունված, ինչի մասին գրանցում է կատարվում Ավագանու նիստի արձանագրության մեջ:

263. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու դեպքում գործող Համայնքի ղեկավարը վայր է դնում իր լիազորությունները, իսկ նորընտիր Համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնում է մեկշաբաթյա ժամկետում:

264. Նորընտիր Համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպվում է սույն Կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված կարգով:

265. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն կարող է ցուցաբերվել Համայնքի ղեկավարի լիազորությունները ստանձնելուց կամ անվստահության հարցը քննարկելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո:

266. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու առաջարկություն չի կարող ներկայացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

19. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

267. Յուրաքանչյուր տարի Համայնքի հաջորդ տարվա բյուջեն հաստատում է Ավագանին: Ավագանին Համայնքի բյուջեում փոփոխություններ է կատարում Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատում է Ավագանին:

268. Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը Ավագանու քննարկմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Բյուջեի նախագիծն Ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Եթե պետական բյուջեն ընդունելիս ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերը փոփոխվում են, ապա Համայնքի ղեկավարը երկշաբաթյա ժամկետում Ավագանու հաստատմանն է ներկայացնում բյուջեի համապատասխան փոփոխությունները:

269. Համայնքի ղեկավարը Ավագանուն ներկայացնում է բյուջեի նախագիծը, պատասխանում է Ավագանու անդամների հարցերին:

270. Ավագանու անդամները և խմբակցությունները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են Ավագանու նիստում: Եթե Ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար, որից հետո Համայնքի ղեկավարը հրավիրում է Ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի՝ Ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը Համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել Ավագանին՝ համաձայնեցնելով Համայնքի ղեկավարի հետ, կամ Համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ:

271. Եթե Ավագանին մինչև տարվա սկիզբը բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում Համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքած պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

272. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացնում Ավագանուն: Ավագանին որոշում է կայացնում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

273. Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն Ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի մեկը՝ նախնական քննարկումներ անցկացնելու համար:

274. Ավագանու նիստում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը քննարկվում և ընդունվում է բյուջեի նախագծի քննարկման և ընդունման համար սահմանված կարգով՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի քսանը:

275. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման հետ կապված՝ Օրենքով և սույն Կանոնակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով:

276. Համայնքի ղեկավարը մշակում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում Ավագանու հաստատմանը: Նոր ձևավորված Համայնքի դեպքում, Համայնքի ղեկավարը մշակում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ներկայացնում Ավագանու հաստատմանն իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ հինգ ամսվա ընթացքում:

277. Ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում դրա մեջ կատարում փոփոխություններ կամ լրացումներ և ընդունում է այն նիստին ներկա Ավագանու անդամների ձայների կեսից ավելիով: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել Համայնքի ղեկավարի կամ Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների կողմից՝ հաշվետու տարում Համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը Համայնքի ղեկավարի ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

278. Համայնքի ղեկավարը մինչև Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը Ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ Համայնքի ղեկավարը Ավագանուն տրամադրում է տեղեկատվություն:

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ (ԶՐԿԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

279. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

280. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը արժանանում են այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են Համայնքի բարօրությանը, ակնառու ներդրում ունեն Համայնքի տնտեսական, սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտի բնագավառի զարգացման գործում, բացառիկ ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում, անվտանգության, պաշտպանության և այլ բնագավառներում՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային կամ այլ դրությունից:

281. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) առաջարկ Ավագանուն կարող է ներկայացնել Համայնքի ղեկավարը:

282. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) միջնորդությամբ Համայնքի ղեկավարին կարող են դիմել Ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունները:

283. Միջնորդություն ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:

284. Ստացված միջնորդությունները Համայնքի ղեկավարն ուսումնասիրում է դրանք ստանալուց հետո մեկամսյա ժամկետում և իր հիմնավորումներով ներկայացնում է Ավագանու քննարկմանը: Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) մասին որոշումն Ավագանին ընդունում է նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

285. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական:

286. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) մասին Ավագանու որոշումը հրապարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է ՋԼՄ-ների միջոցներով:

21. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

287. Սույն Կանոնակարգում ցանկացած փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել Ավագանու որոշմամբ՝ չհակասելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին և այլ նորմատիվ իրավական ակտերին:

288. Սույն Կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

Ձև N 1

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ ____ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ _____ ՀԵՐԹԱԿԱՆ (ԱՐՏԱՀԵՐԹ) ՆԻՍՏ

« » _____ 20 __ Թ. ԺԱՄԸ _____

N	Խմբակցության անվանումը	Ավագանու անդամի ազգանունը, անունը, հայրանունը	Ստորագրությունը	Ստորագրման ժամը	Նշումներ

Աշխատակազմի քարտուղար՝ _____

/ստորագրություն, անուն, ազգանուն/

Ձև N 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

« » _____ 20 ___ Թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

N	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Խմբակցության անվանումը	Խմբակցության ղեկավարի ստորագրությունը

Ձև N 3

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

« » _____ 20 ___ թ.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Նշումի համար (V)

Հ/հ	Նշվում է համայնքի ղեկավարի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Նշվում է առաջադրող խմբակցության անվանումը	

_____ _____

(Քվեարկողի ազգանունը, անունը, հայրանունը) (ստորագրությունը)

Ձև N 4

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

« » _____ 20 ___ թ.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ[1]

Նշվում է համայնքի ղեկավարի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Նշվում է առաջադրող խմբակցության անվանումը

Նշումի համար (V)

ԿՈՂՄ ԵՄ ☐

Նշումի համար (V)

ԴԵՄ ԵՄ ☐

_____

(Քվեարկողի ազգանունը, անունը, հայրանունը)

_____

(ստորագրությունը)

[1] Համայնքի ղեկավարի մեկ թեկնածու լինելու դեպքում

Ձև N 5

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ

Ձ Ե Վ Ա Թ Ո Ւ Ղ Թ N _____

կ.տ[1]

« » _____ 20 __ Թ. ԺԱՄԸ _____

1. **Ավագանու արտահերթ նիստի նախաձեռնությամբ հանդես են գալիս՝**

Հ/հ	Ավագանու անդամի ազգանունը, անունը, հայրանունը	Խմբակցության անվանումը	Ստորագրություն

2. **Ավագանու արտահերթ նիստի հրավիրման ժամկետը՝**

Տարին	Անիսը	Օրը	Ժամը

3. **Ավագանու արտահերթ նիստի առաջարկվող օրակարգը՝**

Հ/հ	Օրակարգային հարցը (հարցերը)

4. **Ձևաթղթին կցվող փաստաթղթերը՝**

Հ/հ	Կցվող փաստաթղթի անվանումը[2]

[1] Դրվում է Աշխատակազմի կնիքը

[2] Կցվում են որոշման նախագիծը, նախագծի ընդունման հիմնավորումը, այլ անհրաժեշտ փաստաթղթեր

Ձև N 6

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՄԱՏՅԱՆ[1]

հ/հ	Ձևաթուղթ ստանալու համար դիմողի ազգանունը, անունը	Ձևաթուղթ ստանալու համար ներկայացված դիմումի (գրության) օրը, ամիսը, տարին, ժամը, մուտքի համարը	Ձևաթղթի տրամադրման օրը, ամիսը, տարին, ժամը,	Ձևաթղթի համարը	Ձևաթուղթը ստացողի ստորագրությունը	Լրացված Ձևաթղթի ներկայացման օրը, ամիսը, տարին, ժամը	Լրացված Ձևաթուղթը ստացողի ստորագրությունը	Նշումներ (տրամադրված Ձևաթուղթը մարված համարվելու կամ այլ նշումներ)

[1] Մատյանը վարվում է թղթային տարբերակով, էջերը համարակալվում են և կարվում

Ձև N 7

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՁԵՎԱԹՈՒՂԹ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ ____ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ _____ ՀԵՐԹԱԿԱՆ (ԱՐՏԱՀԵՐԹ) ՆԻՍՏ

« » _____ 20 ___ Թ. ԺԱՄԸ _____

հ/հ	ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

_____

/ազգանուն, անուն, ստորագրություն/

ՀՀ _____ՄԱՐԶԻ _____ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ_____ ՆՍՏԱՏԵՐՁԱՆԻ ԹԻՎ _____ՀԵՐԹԱԿԱՆ (ԱՐՏԱՀԵՐԹ) ՆԻՍՏ

Ձև N 8

հ/հ	խմբակցության անվանումը	ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	Ավագանու անդամի բացակայության պատճառը	ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ												
				1-ԻՆ ՀԱՐՑ			2-ՐԴ ՀԱՐՑ			3-ՐԴ ՀԱՐՑ			4-ՐԴ ՀԱՐՑ			
				կողմ	դեմ	ձեռնպահ	կողմ	դեմ	ձեռնպահ	կողմ	դեմ	ձեռնպահ	կողմ	դեմ	ձեռնպահ	

ՁԵ N 9

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

« » _____ 20 ___ թ.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ[1]

Նշումի համար (V)

Հ/հ	Նշվում է համայնքի ղեկավարի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Նշվում է առաջադրող խմբակցության անվանումը	

[1] Գաղտնի քվեարկության համար

Ձև N 10

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

« » _____ 20 ___ թ.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ[1]

Նշվում է համայնքի ղեկավարի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Նշվում է առաջադրող խմբակցության անվանումը

Նշումի համար (V)

Կողմ եմ ☐

Նշումի համար (V)

Դեմ եմ ☐

[1] Համայնքի ղեկավարի մեկ թեկնածու լինելու դեպքում՝ գաղտնի քվեարկության համար

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի
N 13 որոշման

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10-ի
N 196 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 111

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԾԱԾԿԱԳԻՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /սահմանվում է հաստիքային 1 միավորի համար/	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1	Համայնքի ղեկավար	1		590,000		590,000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1		477,000		477,000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1		420,000		420,000
4	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1		407,000		407,000
5	Համայնքի ղեկավարի խորհրդական	2		400,000		800,000
6	Համայնքի ղեկավարի օգնական	2		374,000		748,000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
7	Սոլակ բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
8	Քաղսի բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
9	Լեռնանիստ բնակավայրի վարչական ղեկավար	1		341,000		341,000
10	Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավար	1		321,000		321,000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					-
11	Աշխատակազմի քարտուղար	1	1.1-1	477,000		477,000
	Քաղաքաշինության և հողաշինության բաժին					-
12	Բաժնի պետ	1	2.1-1	407,000		407,000
13	Գլխավոր մասնագետ-ճարտարապետ	1	2.3-1	274,000		274,000
14	Գլխավոր մասնագետ	1	2.3-2	274,000		274,000
15	Գլխավոր մասնագետ	1	2.3-3	274,000		274,000
16	Առաջատար մասնագետ	1	3.1-1	223,000		223,000
17	Առաջատար մասնագետ	1	3.1-2	223,000		223,000
18	Առաջատար մասնագետ	1	3.1-22	223,000		223,000
19	1-ին կարգի մասնագետ	1	3.2-1	198,000		198,000
	Գյուղատնտեսություն և բնապահպանության բաժին					-
20	Բաժնի պետ	1	2.1-2	407,000		407,000
21	Գլխավոր մասնագետ	1	2.3-4	274,000		274,000
22	Առաջատար մասնագետ	1	3.1-3	223,000		223,000
23	Առաջատար մասնագետ	1	3.1-4	223,000		223,000
24	1-ին կարգի մասնագետ	1	3.2-2	198,000		198,000
	Ֆինանսատնտեսագիտական բաժին					-
25	Բաժնի պետ	1	2.1-10	407,000		407,000
26	Բաժնի պետի տեղակալ-գլխավոր հաշվապահ	1	2.2-4	327,000		327,000

27	Գլխավոր մասնագետ	1	2.3-25	274,000		274,000
28	Գլխավոր մասնագետ	1	2.3-26	274,000		274,000
29	Գլխավոր մասնագետ	1	2.3-27	274,000		274,000
30	Գլխավոր մասնագետ	1	2.3-28	274,000		274,000
31	Առաջատար մասնագետ	1	3.1-23	223,000		223,000
32	Առաջատար մասնագետ	1	3.1-24	223,000		223,000
	Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին					-
33	Բաժնի պետ	1	2.1-4	407,000		407,000
34	Գլխավոր մասնագետ	1	2.3-10	274,000		274,000
35	Գլխավոր մասնագետ	1	2.3-11	274,000		274,000
36	Գլխավոր մասնագետ	1	2.3-12	274,000		274,000
37	Գլխավոր մասնագետ	1	2.3-13	274,000		274,000
38	Առաջատար մասնագետ	1	3.1-7	223,000		223,000
39	Առաջատար մասնագետ	1	3.1-8	223,000		223,000
40	Առաջատար մասնագետ	1	3.1-9	223,000		223,000
41	Առաջատար մասնագետ	1	3.1-10	223,000		223,000
42	Առաջատար մասնագետ	1	3.1-11	223,000		223,000
43	Առաջատար մասնագետ	1	3.1-12	223,000		223,000
44	1-ին կարգի մասնագետ	1	3.2-3	198,000		198,000
45	1-ին կարգի մասնագետ	1	3.2-4	198,000		198,000
46	1-ին կարգի մասնագետ	1	3.2-6	198,000		198,000
	Տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժին					-
47	Բաժնի պետ	1	2.1-11	407,000		407,000
48	Գլխավոր մասնագետ	1	2.3-29	274,000		274,000
49	Գլխավոր մասնագետ	1	2.3-30	274,000		274,000
50	Առաջատար մասնագետ	1	3.1-25	223,000		223,000
51	Առաջատար մասնագետ	1	3.1-26	223,000		223,000
	Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժին					-
52	Բաժնի պետ	1	2.1-6	407,000		407,000
53	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-2	327,000		327,000
54	Գլխավոր մասնագետ	1	2.3-24	274,000		274,000
55	Գլխավոր մասնագետ	1	2.3-17	274,000		274,000
56	Գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	1	2.3-18	274,000		274,000
57	Առաջատար մասնագետ	1	3.1-15	223,000		223,000
58	Առաջատար մասնագետ	1	3.1-16	223,000		223,000
59	1-ին կարգի մասնագետ	1	3.2-7	198,000		198,000
60	1-ին կարգի մասնագետ	1	3.2-8	198,000		198,000
	Կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին					-
61	Բաժնի պետ	1	2.1-7	407,000		407,000
62	Բաժնի պետի տեղակալ	1	2.2-3	327,000		327,000
63	Գլխավոր մասնագետ	1	2.3-19	274,000		274,000
64	1-ին կարգի մասնագետ	1	3.2-9	198,000		198,000
65	1-ին կարգի մասնագետ	1	3.2-10	198,000		198,000
66	1-ին կարգի մասնագետ	1	3.2-11	198,000		198,000
67	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-1	160,000		160,000
68	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-2	160,000		160,000
69	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-3	160,000		160,000
70	2-րդ կարգի մասնագետ	1	3.3-4	160,000		160,000
	Իրավաբանական բաժին					-
71	Բաժնի պետ	1	2.1-8	407,000		407,000
72	Գլխավոր մասնագետ	1	2.3-20	274,000		274,000

73	Գլխավոր մասնագետ-ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող	1	2.3-21	172,000		172,000
74	Առաջատար մասնագետ-ՔԿԱԳ գործառույթներ իրականացնող	1	3.1-17	160,000		160,000
75	1-ին կարգի մասնագետ	1	3.2-12	198,000		198,000
	Քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժին					-
76	Բաժնի պետ	1	2.1-9	407,000		407,000
77	Գլխավոր մասնագետ	1	2.3-22	274,000		274,000
78	Գլխավոր մասնագետ-բարեվարքության հարցերով կազմակերպիչ	1	2.3-23	274,000		274,000
79	Առաջատար մասնագետ	1	3.1-18	223,000		223,000
80	Առաջատար մասնագետ	1	3.1-19	223,000		223,000
81	Առաջատար մասնագետ	1	3.1-20	223,000		223,000
82	Առաջատար մասնագետ	1	3.1-21	223,000		223,000
83	1-ին կարգի մասնագետ	1	3.2-13	198,000		198,000
	Գնումների և զարգացման ծրագրերի բաժին					-
84	Բաժնի պետ	1	2.1-12	407,000		407,000
85	Գլխավոր մասնագետ	1	2.3-31	274,000		274,000
86	Գլխավոր մասնագետ- զարգացման ծրագրերի պատասխանատու	1	2.3-32	274,000		274,000
87	Առաջատար մասնագետ	1	3.1-27	223,000		223,000
88	Առաջատար մասնագետ	1	3.1-28	223,000		223,000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					-
89	Վարորդ	1		267,000		267,000
90	Վարորդ	1		301,000		301,000
91	Գործավար	1		274,000		274,000
92	Գործավար	2		184,000		368,000
93	Անվտանգության պատասխանատու	2		274,000		548,000
94	Մեդիա օպերատոր	1		274,000		274,000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					-
95	Փորձագետ-որոշակի գործառույթներ համակարգող	7		250,000		1,750,000
96	Անասնաբույժ (0.5 դրույք)	4		80,000		320,000
97	Ցանցային ադմինիստրատոր	1		247,000		247,000
98	Սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման պատասխանատու	1		234,000		234,000
	Ընդամենը	**111**				**29,676,000**

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11-ի
N 13 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10-ի
N 200 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
<<ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
	2	3	4	5	6
1	<<Հրազդանքաղլույս>> ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Տնօրենի օգնական	1	301,000	301,000
3		Գլխավոր մասնագետ	2	208,000	416,000
4		Հաշվապահ	1	235,000	235,000
5		Պահեստապետ	1	301,000	301,000
6		Գործավար	1	133,000	133,000
7		Եռակցող	1	179,000	179,000
8		Հնոցապան օպերատոր	1	180,000	180,000
9		Էլ. մոնտյոր	7	179,000	1,253,000
10		Էլ. մոնտյոր /բնակավայրերի 0.5/	2	89,500	179,000
11		Վարորդ	2	184,000	368,000
12	**Ընդամենը**		**19**		**3,952,000**

Հավելված 3
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի
N13 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10 -ի
N 200 որոշման

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի <<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

Աշխատակիցների թվաքանակը՝ 85

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	<<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Տնօրենի օգնական	1	280,000	280,000
3		Գլխավոր հաշվապահ	1	280,000	280,000
4		Հաշվապահ	1	105,000	105,000
5		Մեքենա-մեխանիզմների պա - տասխանատու	1	345,000	345,000
6		Գլխ. մասնագետ	2	275,000	550,000
7		Մասնագետ	6	195,000	1,170,000
8		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	3	328,000	984,000
9		Մեխանիզատոր / ավտոգրեյդեր/	2	250,000	500,000
		Մեխանիզատոր	2	130,000	260,000
10		Մեխանիզատոր /սեզոնային/	6	130,000	780,000
11		Վարորդ /աղբահավաքման/	14	160,000	2,240,000
12		Վարորդ	4	105,000	420,000
13		Ավագ կոյուղագործ	1	308,000	308,000
14		Կոյուղագործ	3	208,000	624,000
15		Բանվոր /աղբահանության/	23	160,000	3,680,000
16		Բանվոր	4	105,000	420,000
17		Բանվոր /ոռոգման/ սեզոնային	3	105,000	315,000
18		Ավտոփականագործ	1	160,000	160,000
19		Ավտոէլեկտրիկ	1	200,000	200,000
20		Պահեստապետ	1	160,000	160,000
21		Պահակ	2	105,000	210,000
22		Շարժիչագործ /մատորիստ/	1	250,000	250,000
23		Էլ. եռակցող	1	150,000	150,000
	Ընդամենը՝		85		14,798,000

Հավելված 4
Հրազդան համայնքի
ավագանու 2025 թվականի
փետրվարի 11-ի N 13
որոշման

Հավելված
Հրազդան համայնքի
ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 10 -ի N 200
որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 62

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Մաքուր Հրազդան >> ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
		Տնօրենի օգնական	1	301,000	301,000
2		Հաշվապահ	1	248,000	248,000
3		Գլխավոր մասնագետ	1	192,000	192,000
4		Առաջատար մասնագետ	1	155,000	155,000
5		Մասնագետ	3	142,000	426,000
6		Պահեստապետ	1	275,000	275,000
7		Էլ. փականագործ	1	105,000	105,000
8		Փայտահատ (սեզոնային)	1	155,000	155,000
9		Վարորդ (գազ միկրոավտոբուս)	2	142,000	284,000
10		Վարորդ (զիլ ինքնաթափ)	2	160,000	320,000
11		Վարորդ (կամազ փոշեկուլ)	1	200,000	200,000
12		Բարձիչավար	1	221,000	221,000
13		Ծաղկաբույծ	3	105,000	315,000
14		Բանվոր	15	125,000	1,875,000
15		Մաքրուհի	20	125,000	2,500,000
	Ընդամենը		55		7,979,000
1		Բանվոր /այլընտրանքային ծառայող/	7	30,000	
	Ընդամենը		62		7,979,000

Հավելված 5
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11- ի
N 13 որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10 - ի
N 202 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ամսական աշխատավարձը
1	2	3	4	5	6
1	Հրազդանի համայնքապետարանի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկ	Տնօրեն	1	275000	275000
2		Հաշվապահ	0.5	105000	52500
3		Հյուսն	1	173000	173000
4		Հսկիչ	3	130000	390000
5		Մաքրուհի	10	125000	1250000
6		Էլեկտրիկ	1	130000	130000
7		Բանվոր	1	125000	125000
Ընդամենը			17.5		2395500

Հավելված 6
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի
N13որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10-ի
N 203 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 30

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքայի ն միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Տնօրեն	1	407000	407000
2		Գլխ. հաշվապահ	1	190000	190000
3		Գլխ. մասնագետ	2	190000	380000
4		Մասնագետ	2	105000	210000
5		Գործավար	1	105000	105000
6		Հսկիչ	5	105000	525000
7		Վարորդ-մեխանիզատոր	1	147200	147200
8		Վարորդ- ԶԻԼ	1	160000	160000
9		Բանվոր	13	105000	1365000
10		Մաքրուհի	3	105000	315000
	Ընդամենը		30		3804200

Հավելված 7
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11-ի
N 13 որոշման

Հավելված 20
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10 -ի
N 205 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի ենթակայության << Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց >> հիմնարկ

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	340,000	340,000
2	Տնօրենի տեղակալ	1	110,000	110,000
3	Գլխավոր հաշվապահ	1	140,000	140,000
4	Բուժքույր	1	105,000	105,000
5	Մարզիչ	10.83	140,000	1,516,200
6	Տնտեսվար	1	105,000	105,000
7	Հավաքարար	2	105,000	210,000
8	Դռնապան	1	105,000	105,000
9	Պահակ	1	105,000	105,000
	Ընդամենը	19.83		2,736,200

1. ԽՍՀՄ կամ ՀՀ վաստակավոր մարզչի կոչում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով :

2. ԽՍՀՄ կամ ՀՀ սպորտի վարպետի կոչում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամի չափով :

Հավելված 8
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի
N 13 որոշման
Հավելված 22
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 10-ի
N 205 որոշման

Հրազդանի համայնքապետարանի <<Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն>> հիմնարկ

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	340,000	340,000
2	Տնօրենի տեղակալ	1	110,000	110,000
3	Հրահանգիչ-մեթոդիստ	1	110,000	110,000
4	Գլխավոր հաշվապահ	1	140,000	140,000
5	Բուժքույր	1	105,000	105,000
6	Մարզիչ	8	140,000	1,120,000
7	Գործավար	1	105,000	105,000
8	Խմբակավար	5	105,000	525,000
9	Տնտեսվար	1	105,000	105,000
10	Հավաքարար	2	105,000	210,000
11	Պահակ	1	105,000	105,000
	Ընդամենը	23		2,975,000

1. ԽՍՀՄ կամ ՀՀ վաստակավոր մարզչի կոչում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով ;

2. ԽՍՀՄ կամ ՀՀ սպորտի վարպետի կոչում ունենալու դեպքում տրվում է լրավճար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամի չափով ;

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի
N 14 որոշման

Հավելված թիվ 2
Հրազդան քաղաքային համայնքի ավագանու
2014 թվականի մարտի 21-ի
N 29 որոշման

Տպագրված է ընդամենը 4 օրինակ

Օրինակ 2

Բաղկացած է 6 էջից

Հաստատված է
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի
N 14 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

_____Ս.Միքայելյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱԶԴԱՆՔԱՂԼՈՒՅՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2025

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլուս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող,իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Կազմակերպությունը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրությամբ:

2.Կազմակերպությունը ստեղծվել է Հրազդանի համայնքապետարանի 2014 թվականի մարտի 21-ի Հրազդան համայնքի ավագանու N 29 որոշմամբ:

3.Կազմակերպության անվանումն է՝ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլուս» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

4.Կազմակերպությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

5.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է այլ հիմնարկների և կազմակերպությունների հետ՝ համաձայնեցնելով Հրազդանի համայնքապետարանի հետ:

6.Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 1: Կազմակերպությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ :

7.Կազմակերպությունում սահմանվում է՝ հնգօրյա աշխատանքային շաբաթ:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

8.Կազմակերպության գործունեության առարկա են հանդիսանում

1)Հրազդան համայնքի (Ք.Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ, Ջրառատ գյուղերի) արտաքին լուսավորության սպասարկումը և վերանորոգումը.

2)Էներգոռեսուրսների օգտագործման էֆեկտիվության բարձրացումը և սպառման ստրուկտուրաներիօպտիմալացումը.

3)Էներգոծառայությունների կարգավորման հնարավորությունների որակական բարելավումը.

4)Էներգոհամակարգի արդիականացման և տեխնոլոգիաների վերազինման գործընթացներում ներդրումների ներգրավումը

5)համայնքային նշանակության շենքերի, շինությունների ջեռուցման համակարգերի էներգոարդյունավետության կարգավորումը.

6)Հրազդան համայնքի փողոցների,այգիների,պուրակների և բազմաբնակարան շենքերի բակերի արտաքին լուսավորության համակարգերի շահագործումը, սպասարկումը և վերանորոգումը.

7)Համայնքային նշանակություն հանդիսացող շենքերի, շինությունների արտաքին և ներքին լուսավորության կազմակերպումը.

8)Հրազդան համայնքի կարգավորող խաչմերուկների ճանապարհատրանսպորտային լուսացույցերի սպասարկումը և շահագործումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9.Կազմակերպության կառավարումն իրականացնում է Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

10. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

11.Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Կազմակերպության հիմնադրումը,

2) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների սահմանումը,

3) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

4)Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

5) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

6)Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

7)Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

12.Համայնքի ղեկավարը իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման, ոչ պատշաճ կատարման համար:

13. Հրազդան համայնքի ղեկավարը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

2) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները ու ցուցումները,

4) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

5) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

6)վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

7) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունը և տարեկան հաշվեկշիռը,

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,

9) հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

10) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

14.Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը

1)կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Համայնքի ղոկավարը տնօրենին պաշտոնի նշանակում է սահմանված կարգով մրցույթի արդյունքներով: Մինչև կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն

զբաղեցնելու մրցույթի կայացումը համայնքի ղեկավարը կարող է նշանակել Կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով՝ միայն այն անձին ,ով բավարարում է տնօրենի համար օրենքով ներկայացված պահանջները:Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մենկ անգամ երեք ամիս ժամկետով :

2)Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանգրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3) Կազմակերպության տնօրենը՝ չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

4) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

5) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարնի օրենդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

15.Տնօրենը՝

1)ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

2) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ,

3)բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

4) սահմանում է Կազմակերպության կառուցվածքը

5) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմանում, արձակում է հրամաններ, հրահանգեր, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ, վերահսկում դրանց կատարումը,

6)իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմանների ստեղծում նրանց մասնագիտական որակի բարձրացման համար,

7) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

8)ապահովում ներքին աշխատանքային կարգապահության, աշխատանքի պաշտպանության անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը,

9) կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադիրի հաստատմանը,

10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

16. Տնօրենի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է՝ Կազմակերպության տնօրենի օգնականը կամ գլխավոր մասնագետը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

17.Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության կամ օգտագործման իրավունքով նրան հանձնող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում օրենքով չարգելված եղանակներով ձեռք բերված գույքից:

1) Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

2) Կազմակերպության սեփականության պահպանության հոգսը կրում է Կազմակերպությունը:

3) Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

4) Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

5) Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:

6) Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձի իրավունքները դադարեցնելու կամ փոխելու համար:

7) Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

8) Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում Հրազդան համայնքի բյուջեից հատկացումները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհներից:

9)Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

10) Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ ՀՀ կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

18.Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

1) Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հրազդան համայնքի բյուջե:

2) Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Հավելված
Հրազդան համայնքի
Ավագանու 2025 թվականի
փետրվարի 11-ի N15 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2025 ԹՎԱԿԱՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք. ՀՐԱԶԴԱՆ, 2025 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան..... 3

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 4

1.1. Համայնքի ընդհանուր նկարագիրը.....4

1.2. Համայնքի քարտեզագրված ռեսուրսները..... 8

1.3. Համայնքի բնակչության քարտեզագրված կարիքները 13

1.4. Համայնքում առաջնահերթ արձագանքման ենթակա սոցիալական հիմնախնդիրները 2025-2026 թթ. ժամանակահատվածում 18

ՄԱՍ 2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ.....21

2.1. Ծրագրի անձնագիր №1..... 21

2.2. Ծրագրի անձնագիր №2 24

Նախաբան

Հրազդանի համայնքապետարանը, նպատակ ունենալով արձագանքել համայնքի բնակչությանը հանդիպող յուրահատուկ սոցիալական մարտահրավերներին, միաժամանակ խթանելով բնակիչների մասնակցությունը և ներգրավվածությունն այդ հարցերի նույնականացման և դրանց արձագանքման գործընթացում՝ նախաձեռնեց Հրազդան համայնքի տեղական սոցիալական ծրագրի (այսուհետ՝ ՏՍԾ) մշակման աշխատանքները՝ համայնքային կառույցների և համայնքի բնակիչների մասնակցությամբ:

Մասնավորապես, ՏՍԾ հենքով համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպումը դիտարկելով որպես համայնքային մակարդակում սոցիալական ծառայությունների պլանավորման գործիք, որը միտված է լրացնելու պետական և հասարակական սեկտորներում սոցիալական ոլորտի ծառայությունների (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) իրավասություններից դուրս մնացած հարցերի լուծումը, որոնք սոցիալական խնդիրներ են առաջացնում բնակչության համար: Նմանատիպ խնդիրների արդյունավետ լուծման համար սույն ՏՍԾ-ն հիմնվում է սոցիալական խնդիրների լուծման հարցում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության գործողությունների համատեղման ու ներդաշնակեցման սկզբունքի վրա:

Սույն փաստաթղթում ամփոփված են համայնքային քննարկումների ընթացքում նույնականացված առավել նշանակալի խնդիրներն ու դրանց արձագանքման ծրագրերը:

ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Համայնքի ընդհանուր նկարագիրը

Հրազդանը խորոշացված համայնք է, որի կազմում ընդգրկված են Հրազդան քաղաքը և Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ, Ջրառատ գյուղերը:

2024 թվականի մարտի 5-ի դրությամբ համայնքում հաշվառված է 67 588 մարդ:

Հրազդան քաղաքը (մինչև 1959 թվականը՝ ներքին Ախտա), 1959 թվականից քաղաքի կարգավիճակ ստացած, իսկ 1962 թվականից՝ հանրապետության ենթակայության քաղաք: Երևանից 40 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից 1600-1750 մ բարձրության վրա՝ զառիթափ լանջերով և փոքրիկ հարթ տեղամասերով տեղանքում: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝ 3101 մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արևելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արևելքում բարձրանում են Գութանասար, Մենակսար հրաբխային կոները: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Հրազդան քաղաքի ձգվածությունը կազմում է մոտ 25 կմ:

1960-70 թթ. քաղաքի շրջագծի մեջ են մտել Մաքրավան, Վանատուր, Ջրառատ և Կաքավաձոր գյուղերը: Քաղաքի տարածքում հայտնաբերվել են մ.թ.ա. II-I հազարամյակների դամբարաններ: Ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է Մաքրավանի հուշարձանախումբը (XIII դար): Պահվել է XIII դարի քարավանատունը:

Հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի մեջ: Հրազդանի առաջին գլխավոր հատակագիծը մշակվել է 1927-28 թթ-ին (ճարտարապետ Ալեքսանդր Թամանյան): Նախագիծը ընդգրկում էր Ախտա և Ալափարս գյուղերի տարածքը, որի ամֆիթատրոնաձև կառուցապատումը ուղղված էր դեպի Հրազդան գետը (վերջինիս ափամերձ մասը նախատեսված էր օգտագործել որպես հանգստի գոտի): 1961-63 թթ. կազմվել է քաղաքի գլխավոր հատակագծի նոր նախագիծ (ճարտարապետներ՝ Մ. Գրիգորյան, Է. Ալթունյան և ուրիշներ): 1969թ. մշակվել է քաղաքի վարչատարածքային մշակութային կենտրոնի նախագիծը (ճարտարապետներ՝ Մ. Գրիգորյան, Մ. Մանուկյան, Վ. Տոնկիկյան, Տ. Բալայան): Մինչև 1990-ական թթ. կեսերը քաղաքում գործել են (մի քանիսը գործում են նաև այսօր) Հրազդանի ՊՇԷԿ-ը, ՋԷԿ-ը, Ցեմենտի գործարանը, Պանելային տնաշինական կոմբինատը, Ջրառատի կաթի համալիրը, Հացի գործարանը, «Կեչառք» արտադրական միավորումը, «Հրազդանմեքենա» ա/մ և այլ հիմնարկներ ու կազմակերպություններ:

Քաղաքի գրեթե կենտրոնում է գտնվում Սևան-Հրազդան կասկադի և համապատասխան հիդրոհամակարգի կարևոր ջրամբարը, որը կարգավորում է ամբողջ համակարգի ջրամատակարարումը: Հրազդան քաղաքի հարավային մասով է անցնում Երևան-Սևան միջպետական մայրուղին, Երևան-Ծաղկաձոր, Երևան-Հանքավան ճանապարհները:

Ձմռանը ջերմաստիճանը՝ -28-ից -30 է, իսկ ամռանը զով է, ամենաբարձր ջերմաստիճանը +30 -ից գրեթե չի անցնում:

Հրազդանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի մարզկենտրոնն է:

Ջրառատ գյուղը կազմավորվել է 1975 թվականին՝ խորհրդային տարիների ժամանակ նախկին Ջրառատի կաթնային համալիրի բանվորական ավանի հիմքի վրա: Բնակչությունը հավաքվել է ՀՀ տարբեր շրջաններից, ինչպես նաև Ադրբեջանից գաղթած հայերից: Համայնքի կազմի մեջ մտնող բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ:

Ջրառատ գյուղը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1745մ բարձրության վրա, գյուղը սահմանակից է Գեղարքունիքի մարզի Դդմաշեն և Ջովաբեր գյուղերի վարչական տարածքներին: Հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան համայնքից 8 կմ է, մայրաքաղաք Երևանից՝ 55 կմ:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Ձմեռը ցուրտ է, բքաշունչ: Ամառը զով է, երբեմն էլ շոգ ու երաշտ: Տարածքում բնական աղբյուր և գետ չկա: Առաջնահերթ հիմնախնդիրը աշխատատեղերի պակասն է, որն էլ բերում է բնակչության արտագաղթի: Գյուղի բնակիչները զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ: Գյուղի բնակիչները իրենց մասնակցությունն են ունեցել Արցախյան ազատամարտին:

Ջրառատի վարչական տարածքը կազմում է 42,39 հա, որից գյուղատնտեսականն շանակություն ունեն 0,51հա, բնակավայրերը զբաղեցնում են 16,03 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 25,80հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 0,04 հա., պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 1,44 հա:

Սոլակ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի արևմտյան մասում, Հրազդան գետի ափին և մարզկենտրոնից 10 կմ հարավ-արևմուտք:Գյուղը հյուսիս-արևելքից սահմանակից է անտառային ֆոնդի հողերին, հարավ-արևելքից՝Քաղսի համայնքին, հարավ-արևմուտքից՝ Բջնի համայնքին: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 10 կմ հեռավորության վրա է, իսկ մայրաքաղաքից՝ 41 կմ:

Ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, մսուր մանկապարտեզ, առողջության առաջնային պահպանման Կենտրոն:

Բնակիչների նախնիները եկել են Մուշից և Ալաշկերտից՝ 1828 թվականին: Գյուղում և շրջակայքում պահպանվել է Մայրավանք սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 7-րդ դարում, ամրոցը, գյուղատեղիներ, գերեզմանոց՝ 13-19-րդ դարերի խաչքարերով: Բալոր հիմքերը կան կարծելու, որ գյուղի անունը Ամասիա գահակալի Ցելակ որդու հնչյունափոխված տարբերակն է:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկային կուլտուրաների մշակմամբ:

Գյուղի վարչական տարածքը 3842 հա է: Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից 1600-1700 մ է: Կլիման չափավոր ցամաքային է, տարեկան միջին ջերմաստիճանը՝ 5.6-6 աստիճան, տեղումների քանակը 600-800 մմ: Ձմեռը երկարատև է, կայուն ձյունածածկույթվ, ամառը՝ մեղմ և զով: Տարածքում հիմնականում տափաստանային բուսածածկույթով լեռնային սևահողեր են: Գյուղից 2 կմ հեռավորության վրա անցնում է Երևան-Սևան ավտոմայրուղին, իսկ գյուղամիջով՝ երկաթուղին:

Քաղսի գյուղը հիմնադրվել է 1828 թ.՝ Պարսկաստանի Մակու գավառից ներգաղթած ընտանիքների կողմից: Գյուղը գտնվում է Հրազդանից 3 կմ հեռավորության վրա ծովի մակերևույթից 1700-1750 մ բարձրության վրա: Հյուսիսի սահմանագիծը Ծաղկունյաց լեռնաշղթան է: Կլիման չափավոր ցամաքային, ձմեռը երկարատև, կայուն ձնածածկույթով, ամռանը մեղմ և զով: Տարածքում տիրապետում են տափաստանային բուսածածկույթով լեռնային սևահողերը: Գյուղի միջով են անցնում Հրազդան-Սևան, Հրազդան-Աշտարակ մայրուղիները, Սևան-Երևան երկաթգիծը և Հրազդան գետը: Համայնքն ունի 2 եկեղեցի՝ կառուցված 19-րդ դարում:

Գյուղում բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը ոռոգովի ջեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը ցուրտ է, խստաշունչ:Ամառը զով է, երբեմն շոգ ու երաշքտ: Ձնածածկույթը քաղսի համայնքում տևական է լինում, ուղեկցվում բքի վերածվող ուժեղ քամիների, որի պատճառով փակվում են ճանապարհները, դադարում երթևեկությունը, սակայն համայնքում հաճախակի կատարվող ձնամաքրման աշխատանքների շնորհիվ խնդիրը լուծվում է: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ, կարկուտ, երբեմն կարկուտի պատճառով գյուղացին կորցնում է բերքի մի մասը:

Լեռնանիստ գյուղը հիմնադրվել է 1828 թվականին: Բնակվել են Արևմտյան Հայաստանի Խոյ, Մակու, Սալմաստ գավառներից գաղթած հայերը: Գյուղը անվանվել է խորհրդային տարիներին՝ Վերին Ախտա, 1978թ.-ից վերանվանվել է Լեռնանիստ:

Համայնքը ունի մանկապարտեզ, միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, բուժ.ամբուլատորիա:

Լեռնանիստը Հրազդան քաղաքի աջ ուսին հենված գյուղն է: Այն տարածաշրջանի ամենամեծ գյուղերից մեկն է, ունի ավելի քան 550 տնային տնտեսություն, 3719 հա հողատարածք:

Գյուղը Երևանից գտնվում է 45 կմ, իսկ Հրազդանից՝ 7 կմ հեռավորության վրա: Բնակչությունը հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ և արտերկրյա աշխատանքներով:

Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1900 մետր բարձրության վրա:

Հայանքում բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը ցուրտ է, բքաշունչ: Ամառը զով, երբեմն էլ շոգ ու երաշտ: Համայքնում գարունը ուշ է բացվում, աշունը շուտ վերջանում: Ձնածածկույթը Լեռնանիստ համայնքի տարածքում տևական է լինում, ուղեկցվում բքի վերածվող ուժեղ քամիներով, որի պատճառով փակվում են ճանապարհները, դադարում երթևեկումները, սակայն համայնքում հաճախակի կատարվող ձյունածածկ ճանապարհների մաքրման աշխատանքների շնորհիվ , ավտոմեքենաների շարժը չի դադարում: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ, կարկուտ, երբեմն կարկուտի պատճառով գյուղացին կորցնում է բերքի մի մասը:

Համայնքը առաջին հերթին առանձնանում է պատմամշակութային արժեքներով. հնագիտական, պատմամշակութային և հոգևոր արժեք ներկայացնող կառույցներ կան համայնքի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում՝ մատուռներ, վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր և դամբարաններ, ինչպես նաև խորհրդային մոդեռնիզմի շինություններ:

Հրազդանը զբոսաշրջային մեծ հանգույցի վրա է գտնվում՝ Սևան-Ծաղկաձոր-Հանքավան կարևոր նշանակության խաչմերուկի վրա, որը Հրազդանին ընձեռում է համայնքային զբոսաշրջության զարգացման հնարավորություն:

Հրազդան համայնքում են գտնվում միջնադարյան հայկական եկեղեցաշինության բացառիկ հուշարձաններ Մայրավանքն (7-րդ դար) ու Մաքրավանքը (12-14-րդ դարեր):

Այս կառույցների և պատմամշակութային, բնապատմական այլ հուշարձանների առկայությամբ զգալիորեն աճում են համայնքի նկատմամբ հետաքրքրությունն ու այցելությունները ինչպես հանրապետության տարբեր մարզերի բնակիչների, այնպես էլ օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից:

Կարող ենք նշել նաև, որ Հրազդանը բազմամշակութային համայնք է:

Հրազդանի ներկայիս բնակիչների մեծ մասի նախնիները վերաբնակվել են այստեղ 1828-1830-ական թթ.-ին, մի մասը 1915 թ.-ի Հայոց Ցեղասպանության հետևանքով, մի մասն էլ խորհրդային տարիների արտասահմանյան տարբեր երկրներից հայրենադարձվածներն են: Բացի այդ, Հրազդան համայնքում բավական մեծ թիվ են կազմում նաև փախստականները, մասնավորապես, Հրազդանի Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի նախկին, ինչպես նաև Հրազդանի ՋԷԿ-ի, Հրազդանի նախկին Շինտրեստի և այլ հանրակացարաններում, Միկրոշրջանի ‹‹Տնակներ›› թաղամասում դեռևս բնակվում են 1988 թ.-ին Ադրբեջանից Հայաստան տեղափոխված փախստականներ, ինչպես նաև 2020 թ.-ի 44-օրյա պատերազմի (շուրջ 200 ընտանիք) և 2023 թ.-ին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման հետևանքով (շուրջ 1150 ընտանիք) համայնքում բնակություն հաստատած արցախցի ընտանիքներ:

Համայնքում, շնորհիվ բարենպաստ բնակլիմայական պայմանների, բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ: Համայնքը խորհրդային շրջանում արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկն էր, և այժմ ունի նաև արդյունաբերության զարգացման հնարավորություն:

Վերջին շրջանում Հրազդանում մեծ թափով իրականացվում են նաև բնակարանաշինության աշխատանքներ, կառուցվում են բազմաբնակարան շենքեր, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում հատկապես նորաստեղծ ընտանիքների՝ Հրազդանում մնալու և բնակություն հաստատելու համար:

1.2. Համայնքի քարտեզագրված ռեսուրսները

Ներկայացվում են համայնքում քարտեզագրված մարդկային և ենթակառուցվածքային ռեսուրսները.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	• Համայնքային ծառայողներ • Սոցիալական պաշտպանության բնագավառի մասնագետներ • Ակտիվ քաղաքացիներ • Կամավորներ • Ուսանողներ • Երիտասարդներ • Բարերարներ և գործարարներ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՊԵՏԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ	***Կրթական (նախադպրոցական)*** • 15 նախադպրոցական ուսումնական հաստատություն (համայնքային ենթակայության, որից 12-ը քաղաքային, 3-ը՝ գյուղական) ՀՈԱԿ • 2 նախակրթարան (մարզպետի աշխատակազմի ենթակայության) ՊՈԱԿ ***Կրթական (հանրակրթական)*** • 9 հիմնական դպրոց (մարզպետի աշխատակազմի ենթակայության) ՊՈԱԿ • 5 միջնակարգ դպրոց (մարզպետի աշխատակազմի ենթակայության) ՊՈԱԿ • 3 ավագ դպրոց (ԿԳՄՄՆ ենթակայության) ՊՈԱԿ ***Կրթական (մասնագիտական)*** ***Կրթական (նախնական արհեստագործական)*** • «Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ (ԿԳՄՄՆ ենթակայության) ***Կրթական (միջին մասնագիտական)*** • «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ (ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության) ***Կրթական (բարձրագույն)*** • «Հրազդանի հումանիտար ինստիտուտ» (մասնավոր, գործում է ՀՀ ԿԳՄՄՆ լիցենզիայով, պետական հավատարմագրմամբ)

	Կրթական (լրացուցիչ, արտադպրոցական) ***Մարզական.*** • «Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական մարզադպրոց» ՊՈԱԿ (ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության) • ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Արտակ Ռաֆայելյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» հիմնարկ (համայնքային ենթակայության) ***Մարզամշակութային.*** • Հրազդանի համայնքապետարանի «Վահե Զաքարյանի անվան երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոն» հիմնարկ (համայնքային ենթակայության) ***Կրթամշակութային.*** • «ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն բյուջետային հիմնարկ» (համայնքային ենթակայության) • «Հրազդանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության) • «Հրազդանի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության) • «Հրազդանի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության) • «Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության) • «Հրազդանի Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության) ***Մշակութային*** • «Կոտայքի մարզային գրադարան» ՊՈԱԿ (ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության) • «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» (համայնքային ենթակայության, բաղկացած քաղաքային թատրոնից և 3 գյուղական մշակույթի տներից) ՀՈԱԿ • «Հրազդանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության, բաղկացած 10 գրադարանից, որից 7-ը քաղաքային, 3-ը գյուղական) • «Հրազդանի պատկերասրահ» (ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ) • «Կոտայքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ (ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության Հայաստանի պատմության

	թանգարանի մասնաճյուղ) • «Ջրառատի պատմության թանգարան» (մասնավոր հավաքածու, համայնքային թանգարան) ***Առողջապահական*** • «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ (Մարզպետի աշխատակազմի ենթակայության, իր մեջ ներառում է պոլիկլինիկան և ծննդատունը) • «Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ (Մարզպետի աշխատակազմի և համայնքային ենթակայության) • «Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ (Մարզպետի աշխատակազմի ենթակայության) • «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ (Մարզպետի աշխատակազմի ենթակայության) • «Հրազդանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ (ՀՀ Առողջապահության նախարարության ենթակայության) • 4 լաբորատոր կենտրոն (մասնավոր լիցենզավորված) ***Սոցիալական պաշտպանություն (այդ թվում զբաղվածություն)*** • Միասնական սոցիալական ծառայության Հրազդանի տարածքային կենտրոն (ՄՄԾ, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության) • ՄՄԾ Հրազդանի տարածքային կենտրոնի սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդ (գործում է հասարակական սկզբունքով) • Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժին • Հրազդանի համայնքապետարանի սոցիալական աջակցության հանձնաժողով (քաղաքացիների կողմից համայնքապետարանի աշխատակազմ ներկայացվող սոցիալական աջակցության խնդիրներով հասցեագրված դիմումները ուսումնասիրելու նպատակող ստեղծված մշտական գործող հանձնաժողով) • Հրազդան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով • ‹‹Առաքելություն Հայաստան›› բարեգործական ՀԿ-ի ‹‹Հրազդանի ցերեկային կենտրոն›› (իրականացնում է տարեցների անվճար ցերեկային խնամք, տաք սննդի ծրագիր, երեխաների ցերեկային զբաղվածություն,

	համայնքային աջակցության այլ ծառայություններ) • Հայկական Կարմիր Խաչի Ընկերության Կոտայքի մարզային մասնաճյուղ (իրականացնում է տարեցների անվճար և վճարովի ցերեկային խնամք, համայնքային աջակցության այլ ծառայություններ) • ‹‹Երեխաների աջակցության հիմնադրամ›› ՀԿ (իրականացնում է հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամք, այլ ծառայություններ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների աջակցության ծրագրեր) • ‹‹Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն›› բարեգործական ՀԿ (իրականացնում է հաշմանդամություն ունեցող, մասնավորապես ՄՈՒԿ ախտորոշմամբ երեխաների ցերեկային խնամք, այլ ծառայություններ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների աջակցության ծրագրեր) • ‹‹Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն›› ՀԿ (իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և կանանց աջակցության ծրագրեր) • ‹‹Հենասյուն›› հաշմանդամների ՀԿ (իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծրագրեր) • Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի սոցիալ-հոգեբանական աջակցության համայնքային կենտրոն («Լեռնային Ղարաբաղի տուժած բնակչության կենսական ապահովման և դիմակայության ամրապնդմանն ուղղված աջակցություն դեպքի վարման և հոգեբանական առաջին օգնության միջոցով» ծրագիր, ինչպես նաև համայնքի խոցելի ընտանիքների հետ աշխատանքներ) ***Հասարակական կազմակերպություններ.*** • «Ջրառատ բարեգործական» ՀԿ • «Հայք» կրթական և սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն» ՀԿ • Հայ Օգնության Միության (ՀՕՄ) Հրազդանի «Շուշան Պահլավունի» մասնաճյուղ ՀԿ • «Հայի բռունցք» երիտասարդական, մշակութային ՀԿ • «Երիտասարդների համագործակցության «Իրավատես» ակումբ» կրթական իրավապաշտպան ՀԿ • Հայաստանի գրողների միության Կոտայքի մարզային մասնաճյուղ • «Միասնական Հրազդան» ՀԿ

	• «Թոշակառուների զբաղվածության ակումբ» ՀԿ • «Ջոջ տուն» կրթամշակութային ՀԿ • «Քաղաքացիական ակադեմիա» կենտրոն» ՀԿ ***Կրոնական*** • Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդարան (Թեմի Սոցիալական կենտրոնի «Սոցիալական աջակցություն թեմի ծայրահեղ անապահով ընտանիքներին» ծրագիր) • Հայաստանի Ավետարանական Եկեղեցի • Հայ Ավետարանական Մկրտական Քրիստոնյաների Եկեղեցիների Միություն • Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Հայաստանի Կրոնական համայնք ***Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի եկեղեցիներ. Հրազդան քաղաքում գործող 3 եկեղեցի.*** • Սուրբ Աստվածածին եկեղեցի (Վանատուր թաղամաս) • Սուրբ Կարապետ եկեղեցի (Ջրառատ թաղամաս) • Սուրբ Խաչ եկեղեցի (Կոճոռ թաղամաս) ***Գյուղական բնակավայրերում գործող 4 եկեղեցի.*** • Լեռնանիստի Սուրբ Աստվածածին եկեղեցի • Լեռնանիստի Սուրբ Հակոբ եկեղեցի (Սուրբ Ավազան) • Սոլակի Սուրբ Աստվածածին եկեղեցի • Սոլակի Մայրավանք

1.3. Համայնքի բնակչության քարտեզագրված կարիքները

Հրազդան համայնքի բնակչության կարիքները քննարկվել և առանձնացվել են ըստ առանձին խոցելի խմբերի՝ յուրաքանչյուրի դեպքում դիտարկելով առավել նշանակալիները: Մասնավորապես, դիտարկվել են հետևյալ խմբերը՝ երեխաներ, երիտասարդներ, տարեցներ, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, անապահով ընտանիքներ, տեղահանվածներ, պատերազմի մասնակիցներ: Յուրաքանչյուր խմբի համար առանձնացվել է կարիքների երկու խումբ՝ հիմնական և լրացուցիչ: Ի լրումն, նաև դիտարկվել ու առանձնացվել են համայնքում առկա այն կարիքներն ու հիմնախնդիրները, որոնք ունեն ընդհանրական բնույթ:

ԵՐԵԽԱՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Երեխաների համար ժամանցային կենտրոնների բացակայությունը.** չնայած համայնքում երիտասարդ բնակչության գերակշռող թվին՝ համայնքում երեխաների ժամանցի կազմակերպման հնարավորությունները քիչ են, հատկապես խոսքը վերաբերում է համայնքի տարածքում գտնվող գյուղական բնակավայրերին:
2. **Բուլլինգի առկայությունը.** մանկապարտեզներում և դպրոցներում հանդիպում են *(մանկավարժ-երեխա, երեխա-երեխա հարաբերություններում)* բուլինգի դեպքեր:
3. **Ծնողավարման հմտությունների պակասը.** համայնքում ծնողների շրջանում նկատելի է ծնողավարման հմտությունների պակաս, որը հաճախ զուգորդվում է իրազեկվածության պակասով, մասնավորապես վարքային խնդիրներ ունեցող երեխաների հետ հաղորդակցման ու դաստիարակության դեպքում: Համայնքում կան կրթությունից դուրս մնացած, ծնողների կողմից ոչ բավարար ուշադրություն ստացած երեխաներ: Երեխաներն ունեն դեմ առ դեմ շփման մոտիվացիայի պակաս, բավական երկար ժամանակ են անցկացնում համացանցում, ցածր է նաև սովորելու մոտիվացիան:
4. **Կախվածություն թմրանյութերից, ալկոհոլից, ծխախոտից.** երեխաների շրջանում նկատվում են տարատեսակ կախվածության խնդիրներ հատկապես մեծ է ռիսկը դպրոցահասակ երեխաների շրջանում (միջին և ավագ դպրոց)՝ հիմնականում պայմանավորված սոցցանցերում ներգրավվածությամբ:
5. **Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ.** Հրազդան համայնքում կան փոքրաթիվ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, որոնք չունեն բավարար իրազեկվածություն իրենց իրավունքների և պետության կողմից տրամադրվող արտոնությունների մասին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Աշխատող երեխաներ՝** ավագ դպրոցական տարիքի շատ երեխաներ աշխատում են՝ հաճախ չգրանցվելով հարկային համակարգում գործատուի կողմից:
2. Համայնքում կան **իրավախախտ, օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաներ:**

3. Հատուկ մասնագետների ծառայությունները վճարովի են, և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընտանիքները չեն կարողանում վճարել, ինչը վնասում է և՛ երեխայի ֆունկցիոնալությանը, և՛ ընտանիքի կենսագործունեությանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Կախվածություն թմրանյութերից, ալկոհոլից, ծխախոտից, առցանց խաղերից,** որոնք նպաստում են վատ սովորությունների տարածվածությանը:
2. **Զբաղվածության խնդիր.** Սահմանափակ աշխատատեղերը երիտասարդների համար գրավիչ և նախընտրելի չեն: Երիտասարդները կարիք ունեն լրացուցիչ կրթական ծրագրերի: Տեսական գիտելիքներն ու հմտությունները գործնականում կիրառելու հնարավորությունները սահմանափակ են, ինչի պատճառով էլ իրենց մասնագիտական գործունեությունը կազմակերպում են համայնքից դուրս:
3. **Ազատ ժամանցի կազմակերպման խնդիր՝** ժամանցի վայրերի՝ սրճարանների, կինոթատրոնի, զբոսայգիների,համերգասրահների պակաս:
4. **Երիտասարդական կենտրոնների բացակայություն.** Համայնքային երիտասարդական կենտրոնների բացակայության պատճառով համայնքի երիտասարդները իրենց կարողություններն ու հմտություններն իրացնում են հիմնականում մայրաքաղաքում: Նմանատիպ կենտրոնները համայնքի երիտասարդության համար կարող են ծառայել ոչ ֆորմալ կրթության և համայնքային տարատեսակ խնդիրները լուծելու հարթակներ:

ՏԱՐԵՑՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Ժամանցի, զբաղվածության խնդիր՝** զբաղվածության բացակայության, և ժամանցի վայրերի պակասի, ինչպես նաև ընտանեկան տարբեր խնդիրների պատճառով առաջանում է **անտեսվածության զգացում,** ինչը բարձրացնում է տարեցների խոցելիությունը և մեկուսացվածությունը:
2. **Իրազեկվածության խնդիր**, տեղեկատվական և իրավաբանական խորհրդատվության պակաս՝ միայնակ տարեցները ունեն իրավաբանական խորհրդատվության կարիք, մասնավորապես, կապված պետության կողմից տրամադրվող աջակցությունների հետ:
3. Տարեցների համար բժշկական ծառայությունները **ոչ միշտ են մատչելի և հասանելի:**

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ

1. Կենսաթոշակառուների **թոշակի անկանխիկ լինելը** խնդիրներ է ստեղծում այն կանխիկացնելու համար, քանի որ տարեցները չունեն անհրաժեշտ հմտություններ, իսկ գյուղական բնակավայրերում ապրող տարեցները պետք է հասնեն կենտրոն՝ կենսաթոշակը ստանալու համար:

ԿԱՆԱՅՔ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Կանանց «բեռ»-ի ավելացում՝** կանայք ներգրավված են և՛ տան առօրյա, և՛ երեխաների խնամքի իրականացման, և՛ մասնագիտական գործունեության աշխատանքներում:
2. **Բռնության ենթարկված կանանց համար ճգնաժամային կենտրոնի բացակայություն,** այս առումով խնդիրներ են առաջանում բռնարարին ընտանիքից առանձնացնելու, ինչպես նաև երեխային և մորը ապահով վայր տեղափոխելու հետ կապված:
3. **Կարծրատիպային մտածելակերպ.** հաճախ կանայք մշակութային-սոցիալական կարծրատիպերի ազդեցության ներքո վախենում են իրենց նկատմամբ բռնության մասին բարձրաձայնել կամ դիմել համապատասխան աջակցող կառույցների:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիր.** տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար թեքահարթակները քիչ են, բացի այդ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք չեն կարողանում օգտվել տրանսպորտից կամ ազատ տեղաշարժվել համայնքում:
2. **Զբաղվածության խնդիր.** գործատուները խուսափում են աշխատանք առաջարկել հաշմանդամություն ունեցող անձանց: Այս խնդիրը լուրջ մարտահրավեր է նաև մտավոր/հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:
3. **Ծառայությունների պակաս հաշմանդամություն ունեցող երեխաների/ անձանց, ինչպես նաև նրանց ծնողների համար.** վերականգնողական և ցերեկային, այդ թվում նաև սոցիալ-հոգեբանական ծառայությունների պակաս:
4. **Հասարակությունում ինտեգրման խնդիր՝** ֆիզիկական միջավայրի անմատչելիության, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ առկա անհանդուրժողականության, կարծրատիպերի, հաճախ նաև բուլլինգի պատճառով դժվարություններ են առաջանում հասարակությունում ինտեգրվելու գործընթացում: Երեխաները չեն կարողանում հաճախել մշակութային կենտրոններ: Այս առումով առանձնահատուկ անհրաժեշտ է նշել կրթական իրավունքի իրացման խնդիրը: Վերոնշյալ խնդիրները խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող երեխաների մուտքը մանկապարտեզներ և դպրոցներ, ինչպես նաև առաջացնում են դժվարություններ հետագա մասնագիտություն ընտրելու և ստանալու հարցում:
5. **Հատուկ մասնագետների պակաս.** համայնքում առկա է երեխաների հետ աշխատող հատուկ մասնագետների պակաս:

ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

1. **Բազմազավակ ընտանիքներ**. համայնքում բազմազավակ ընտանիքներն առավել անապահով ընտանիքների թվում են. հիմնականում չունեն միջոցներ կոմունալ վճարումների, վարձավճարների կատարման, երեխաների ժամանցի կազմակերպման կամ բարձրագույն կրթության հետ կապված խնդիրները լուծելու համար:
2. **Նպաստառու ընտանիքները.** նպաստառու ընտանիքների շրջանում նկատվում է կախվածություն սոցիալական աջակցության ծրագրերից, այդ թվում զբաղվածության ծրագրերում ներգրավման մոտիվացիայի բացակայություն: Հիմնականում այս խմբի ընտանիքների մոտ տեսանելի են աղքատության մշակույթի դրսևորումներ, ընտանիքները նախընտրում են չաշխատել ու նպաստ ստանալ կամ ունենալ չգրանցված աշխատանք և զուգահեռ օգտվել պետական նպաստներից:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ

1.Համայնքում առկա չեն **ժամանակավոր կացարաններ՝** անօթևան մնացած անձանց համար: Ավելին, նման կացարաններ չկան նաև հարակից համայնքներում, որոնցից Հրազդան համայնքը նույնպես կարող էր օգտվել:

2.Անապահով ընտանիքների **ակտիվացման հնարավորությունների, զբաղվածության խթանման ծրագրերի պակաս** կա:

ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Ինտեգրման խնդիրներ.** Արցախից բռնի տեղահանված բնակչությունը ամբողջությամբ ինտեգրված չէ համայնքում:
2. **Բնակարանային ապահովման խնդիր.** տեղահանված անձանց համար հիմնական խնդիրներից է կացարանը, վարձով տների պարագայում բնակվարձերը հիմնականում բարձրացել են:
3. **Աշխատանքի տեղավորման խնդիր.** Արցախից բռնի տեղահանված անձինք, տեղի շուկայի պահանջարկին ծանոթ չլինելով, չեն կարողանում լուծել զբաղվածության խնդիրը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Զբաղվածության խնդիր,** պատերազմական գործողություններին մասնակցած, հատկապես վիրավորում ստացած և հաշմանդամություն ձեռք բերած երիտասարդների մոտ զբաղվածությունը կարևոր խնդիր է:
2. Պատերազմական գործողությունների մասնակիցների համար **սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրերի** ոչ գրավիչ լինելը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԻՔՆԵՐ/ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

1. **Աշխատատեղերի սակավություն Հրազդան համայնքում՝** համայնքի բնակիչները աշխատատեղերի սակավության պատճառով աշխատանք են փնտրում Երևանում, որտեղ աշխատանք գտնելու հնարավորություններն ավելի մեծ են: Վերջին տարիներին գործազրկության մակարդակը նվազել է.ՄՄԾ Զբաղվածության բաժինն առաջարկում է մի շարք ծրագրեր գործազուրկ անձանց:
2. **Թափառող շների խնդիրը.** Թափառող շների ստերջացման ծառայությունների ձեռքբերումը ժամանակավոր լուծումներ է առաջարկում:
3. **Ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ.** Համայնքի տարածքը կտրտված է, քաղաքի ծգվածությունը 25 կմ է, առկա է տրանսպորտային հանգույցի սակավության խնդիր:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ

1. Համայնքապետարանի և ենթակա կառույցներում աշխատող մասնագետների համար **սոցիալական փաթեթների** բացակայությունը:
2. Երևան գնացող ուսանողների համար տրանսպորտային **ծառայության բարձր գինը:**
3. **Հոգեբանական առաջին օգնության** ծառայությունների բացակայությունը:
4. Սպասարկման ոլորտի աշխատակիցների՝ բնակչության հետ հաղորդակցման **հմտությունների զարգացման անհրաժեշտությունը:**
5. Հանրակացարանների և տնակային թաղամասի ոչ բարենպաստ, վթարային պայմանները, որոնք հաճախ կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն պայմաններ չեն ապահովում:

1.4. Համայնքում առաջնահերթ արձագանքման ենթակա սոցիալական հիմնախնդիրները 2025-2026-թթ. ժամանակահատվածում

Համայնքային քննարկումների ընթացքում համայնքի բնակչության կարիքների, ինչպես նաև դրանց լուծման հեռանկարների վերաբերյալ առաջարկությունների քննարկումն իրականացվել է ըստ կոնկրետ խոցելի սոցիալական խմբի և իրականացվել է առաջնորդվելով նախորդ հատվածում բացահայտված և համաձայնեցված կարիքների լուծման հնարավորություններով:

N	Խումբ	Առաջարկություն
1	Երեխաներ	*1. Խաղահրապարակների քանակի ավելացում:* *2. Հանրակրթական դպրոցներում խմբակների ստեղծում (օր. սպորտային խմբակներ, որոնց միջոցով հնարավոր է կանխարգելել՝ երիտասարդների շրջանում ալկոհոլի և թմրանյութերի օգտագործումը): Անհրաժեշտություն կա նաև դպրոցներում՝ մասնագետների կազմում ներառել առնվազն 1 սոցիալական աշխատողի և հոգեբանի:* *3. Վերականգնողական կենտրոնի բացում՝ հատուկ կարիքներով երեխաների համար:* *4. Ցերեկային ծառայությունների տրամադրում հաշմանդամություն ունեցող երեխաներին, ներառյալ մոբիլ (շարժական) ծառայությունը և կանխարգելիչ ծառայությունները:* *5. Բակային ճամբարներ, արշավական ակումբների հիմնում, ռազմական պատրաստվածության ծրագրերի իրականացում:*
2	Երիտասարդներ	*1. Երիտասարդական կենտրոն՝ ազգային մշակույթի, պատմության, արժեհամակարգի ձևավորման, փափուկ հմտությունների, վատ սովորույթների, ռազմական պատրաստվածության վերաբերյալ դասընթացների կամ այլ նորարարական գաղափարների իրականացմամբ:* *2. Երիտասարդների համար փորձի փոխանակման, մասնագիտական կողմնորոշման, պրակտիկայի հնարավորությունների ձեռքբերման (ներառյալ փորձառության ծրագրեր, լրացուցիչ կրթության կենտրոններ), որոնք կվերաբերեն նաև փափուկ հմտությունների (soft skills), SS գիտելիքների ուսուցմանը և կնպաստեն, որ երիտասարդները հեշտությամբ կարողանան անցնել աշխատանքի:*
3	Տարեցներ	*1. Ցերեկային ծառայությունների մատուցում, ներառյալ տնային սպասարկման ծառայությունը, ինչպես նաև տարեցների համար առողջապահական, մշակութային, ժամանցային*

		հնարավորությունների ապահովում: Նշված ծառայությունը կարող է ներառել նաև ճաշարան, շրջիկ կամ մոբիլ առողջապահական ծառայություններ: 2. Տարեցների կողմից պատրաստված ձեռագործ աշխատանքների իրացման կետի ստեղծում:
4	Հաշմանդամություն ունեցող անձինք	1. Ցերեկային ծառայություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, որը կներառի արհեստագործական խմբակներ՝ ինքնազբաղվածության հնարավորությունների ստեղծման նպատակով: 2. Վերականգնողական ծառայություն հաշմանդամություն ունեցող անձանց համար, ներառյալ տնային խնամքի, պատրոնաժի ծառայություն: 3. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման հնարավորությունների ստեղծում: 4. Հարմարեցված ենթակառուցվածքներ, թեքահարթակների հարմարեցում, լուսացույցերի ձայնային ազդանշաններ տեսողական խնդիր ունեցող անձանց համար և այլն: 5. Հատուկ մասնագետների շարունակական պատրաստվածության ապահովում:
5	Անապահով ընտանիքներ	1. Մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ զբաղվածության ապահովման նպատակով: 2. Ինքնազբաղվածության խթանման ծրագրեր՝ համատեղելով անհրաժեշտ գործիքների տրամադրումը (վարսահարդարման, մատնահարդարման և այլն)՝ ընտանեկան նպաստ համակարգից հրաժարվելու նախապայմանով: 3. Բնակարանային ֆոնդեր և հանրակացարանների ավելացում:
6	Պատերազմի մասնակիցներ և պատերազմի հետևանքով զոհ ունեցող ընտանիքներ	1. Փոխօգնության խմբերի ստեղծում՝ հոգեբանական աջակցության կարիքին ուղղված: 2. Մասնագիտական վերապատրաստման ծառայություններ՝ զբաղվածության ապահովման նպատակով: 3. Ինքնազբաղվածության խթանման ծրագրեր՝ համատեղելով անհրաժեշտ գործիքների, նյութերի տրամադրումը (ընտանի կենդանիներ, մեղուներ և այլն):
7	Լրացուցիչ կարիքներ	1. Հոգեբանական առաջին օգնության դասընթացներ՝ ուսուցիչների, բժիշկների, սոցիալական աշխատողների և առաջնային օղակում գտնվող մյուս մասնագետների համար: 2. Շարունակական հմտությունների զարգացման դասընթացներ օգնող մասնագետների համար: 3. Արտակարգ իրավիճակների պատրաստվածության

		դասընթացներ համայնքի բնակիչների համար: **4.** *Հանրակացարանների վերանորոգում, ինչպես նաև հանրակացարանին կից երեխայակենտրոն միջավայրի ստեղծում՝ խաղահրապարակ, ապահով անկյուն և այլն: Հանրակացարանին կից սոցիալական ծառայության ստեղծում՝ ծնողների հետ աշխատանքներ իրականացնելու նպատակով::* **5.** *Մասնավոր կրթական կենտրոններում վերահսկողության սահմանում:*

Ինչպես տեսնում ենք, համայնքային քննարկումների ընթացքում, նույնականացված սոցիալական հիմնախնդիրների շարքը, որոնց բախվում են Հրազդան համայնքի բնակիչները, բավականին լայն է: Ըստ այդմ, հաշվի առնելով սոցիալական հիմնախնդիրների արձագանքման ռեսուրսների սահմանափակությունը *(ինչպես նյութական, այնպես էլ մարդկային)* որդեգրվել է սոցիալական հիմնախնդիրների արձագանքման աստիճանական մոտեցում, ինչը ենթադրում է սոցիալական հիմնախնդիրների սահմանում՝ ըստ առաջնահերթության:

2025-2026 թթ. ընկած ժամանակահատվածում առավել առաջնահերթ է համարվել հետևյալ սոցիալական հիմնախնդիրներին արձագանքելը՝

1. Երեխաների և երիտասարդների զբաղվածության կազմակերպմանն ու մասնագիտական կողմնորոշմանն առնչվող խնդիրները,
2. Առողջապահական ծառայությունների ոչ մատչելի լինելը բնակչության որոշ խմբերի, հատկապես՝ տարեցների, քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց համար,
3. Սոցիալական ակտիվացման, այդ թվում աշխատանքային գործիքների տրամադրման և մասնագիտական ուսուցման ծրագրերի պակասը, հատկապես անապահով ընտանիքների, պատերազմից տուժած անձանց ընտանիքների և այլ խոցելի ընտանիքների/անձանց համար:
4. Ծնողավարման հմտությունների թույլ զարգացվածությունը, հատկապես փախստական, անապահով ընտանիքների շրջանում:

ՄԱՍ 2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ

2.1. Ծրագրի անձնագիր №1

Բնաիրային օգնության տրամադրման համայնքային սոցիալական ծրագրի անձնագիր

Անվանումը՝ Բնաիրային օգնության տրամադրում				
Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն			
Ծրագրի անմիջական նպատակ	Բնաիրային օգնության միջոցով սոցիալական աջակցություն տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին: Այս ծրագրի համատեքստում կյանքի դժվարին իրավիճակներ են համարվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետում ներկայացված իրավիճակները:			
Ծրագրի հիմնական արդյունքներ	Համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքների հիմնական կարիքները բավարարված են: Այս ծրագրի հիմնական կարիք են համարվում սննդի, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների, դեղերի, առաջին անհրաժեշտության կենցաղային այլ ապրանքների կարիքները: Աջակցության քարտերի միջոցով նախատեսվում է բավարարել շահառուների սոցիալական կարիքները:			
	Շահառուների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ	
		250		300
Ծրագրի միջանկյալ արդյունքներ				
		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ	
		125	150	
	1. Համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին աջակցություն տրամադրելու համար համապատասխան ապրանքներ կամ քարտեր տրամադրող կազմակերպություններն ընտրված են, և նրանց հետ ստորագրված են պայմանագրեր,			

<table>
<tr><td></td><td>2. Շահառուների ընտրության չափանիշները և ընթացակարգերը մշակված են և հաստատված,
3. Անհրաժեշտ փաստաթղթերի ձևաչափերը մշակված են և հաստատված:</td></tr>
<tr><td></td><td><table>
<tr><td rowspan="2">Կնքված պայմանագրերի թիվը</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>4</td><td></td><td>6</td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="5"></td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների ընտրության չափանիշների, ընթացակարգերի, ձևաչափերի փաթեթները</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>3</td><td></td><td>3</td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>- սահմանել նախատեսված աջակցությունը տրամադրող կազմակերպությունների ընտրության չափանիշները (օրինակ՝ խանութների, դեղատների և այլն)
- իրականացնել նշված չափանիշներին բավարարող կազմակերպությունների ընտրությունը,
- կազմակերպությունների հետ ստորագրել համապատասխան պայմանագրեր,
- մշակել և հաստատել շահառուների ընտրության չափանիշները,
- մշակել և հաստատել ծրագրի իրականացման ընթացակարգերն, այդ թվում՝ դիմումների ընդունման, կարիքի գնահատման, ուղղորդման, մոնիթորինգի,
- մշակել և հաստատել ծրագրի հիմնական ձևաթղթերի նմուշները,
- մշակել և հաստատել ծրագրի հաշվետվողականության մեխանիզմները:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td>3.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td>Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td>Արտակարգ իրավիճակ,ռազմական դրություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները:
Առաջնահերթությունը տրվում է կրկնակի խոցելիություն ունեցող անձանց, օրինակ՝ բազմազավակ ընտանիքներին, հղի կանանց, առանց ծնողական խնամքի մնացած</td></tr>
</table>

	երեխաներին, տեղահանված անձանց, տարեցներին, հաշմանդամություն կամ անձի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց և այլն:
Ծրագրի սկիզբ և ավարտ	2025
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սույն ծրագրով նախատեսված է աջակցել համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին բավարարելու իրենց հիմնական կարիքները: Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել աջակցության քարտերի միջոցով:

2.2. Ծրագրի անձնագիր №2

Սոցիալ-վերականգնողական օգնության տրամադրման համայնքային սոցիալական ծրագրի անձնագիր

Անվանումը՝ Սոցիալ-վերականգնողական օգնության տրամադրում				
Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն			
Ծրագրի անմիջական նպատակ	Սոցիալ-վերականգնողական օգնության միջոցով սոցիալական աջակցություն տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին: Այս ծրագրի համատեքստում կյանքի դժվարին իրավիճակներ են համարվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետում ներկայացված իրավիճակները:			
Ծրագրի հիմնական արդյունքներ	Համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքների հիմնական կարիքները բավարարված են: Այս ծրագրի համատեքստում հիմնական կարիք են համարվում հիվանդության կամ վնասվածքների հետևանքով անձի առողջական վիճակի վատթարացումը, անկախ կյանքի ձեռքբերումը կամ պահպանումը, սոցիալական ներառումը, հոգեհուզական կամ վարքային վերականգնումը: Սոցիալ-վերականգնողական օգնության միջոցով նախատեսվում է բավարարել շահառուների սոցիալական կարիքները:			
	Շահառուների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ	
		75		150
Ծրագրի միջանկյալ արդյունքներ				
		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ	
		40	110	
	1. Համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին աջակցություն տրամադրելու համար համապատասխան ծառայությունները կամ մասնագիտական աջակցություն տրամադրող կազմակերպությունների հետ համագործակցության ընթացակարգերը մշակված են և			

	հաստատված, 2.Շահառուների ընտրության չափանիշները և ընթացակարգերը մշակված են և հաստատված, 3. Անհրաժեշտ փաստաթղթերի ձևաչափերը մշակված են և հաստատված:

Մշակված ընթացակարգերի թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ		
	1		3	

Շահառուների ընտրության չափանիշների, ընթացակարգերի, ձևաչափերի փաթեթները	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ		
	3		3	

Ծրագրի հիմնական գործողությունները	- սահմանել նախատեսված աջակցությունը տրամադրելու ընթացակարգերը (օրինակ ինչպես է իրականացվում բժշկական, վերականգնողական կենտրոնների, դեղատների և այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը), - մշակել և հաստատել շահառուների ընտրության չափանիշները, - մշակել և հաստատել ծրագրի իրականացման ընթացակարգերն, այդ թվում՝ դիմումների ընդունման, կարիքի գնահատման, ուղղորդման, մոնիթորինգի, - մշակել և հաստատել ծրագրի հիմնական ձևաթղթերի նմուշները, - մշակել և հաստատել ծրագրի հաշվետվողականության մեխանիզմները:
Ծրագրի բյուջեն	1.300.000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները: *Առաջնահերթությունը տրվում է կրկնակի խոցելիություն ունեցող անձանց, օրինակ՝ բազմազավակ ընտանիքներին, հղի կանանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, տեղահանված անձանց, տարեցներին,*

	հաշմանդամություն կամ անձի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց:
Ծրագրի սկիզբ և ավարտ	2025
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սույն ծրագրով նախատեսված է աջակցել համայնքի՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին բավարարելու իրենց հիմնական կարիքները: Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել բժշկական կենտրոնների, վերականգնողական կենտրոնների միջոցով:

Հավելված 1

Հրազդան համայքի ավագանու
2025 թվականի փետրվարի 11 -ի N 17 որոշման

ԿԵԽՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ
ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

1. Ծրագրի անվանումը	Ժամանակակից ՏԻՄ – մասնակցության խթանում
2. Ծրագրի տևողությունը *(սկիզբ/ավարտ, օր/ամիս/տարի)*	Ծրագրի սկիզբը՝ 20.11.2024թ. Ծրագրի ավարտը՝ 20.02.2025թ.
3. ԿԵԽՄ համայնքը Համակարգողը *(անուն, ազգանուն, կոնտակտային տվյալներ)*	Հրազդան համայնք Բարեղամյան Վանուհի vanuhi.bareghamyan94@gmail.com
4. Խնդրում ենք նշել դրամաշնորհային հայտի մեջ ներկայացված Ձեզ հետաքրքրող թեմատիկ ուղղությունը:	Տեղական ինքնակառավարման վերաբերյալ իրազեկության բարձրացում

5. Նկարագրեք հիմնախնդիրը, որի շուրջ կազմելու եք ձեր ծրագիրը. ա. 3-5 նախադասությամբ նկարագրեք անցյալը՝ ինչպիսի՞ն էր խնդիրը նախկինում (տարիներ առաջ), ինչպե՞ս է այն առաջացել, ինչո՞ւ է այն ծագել, ի՞նչ է արվել իրավիճակը բարելավելու համար բ. 3-5 նախադասությամբ նկարագրեք ներկա իրավիճակը (ի՞նչ է փոխվել դեպի լավը կամ վատը, խնդիրը խորացե՞լ է, թե՞ թեթևացել)	Հիմնախնդիր՝ Ավագանու նիստերի հեռարձակման վատ որակի պատճառով մասնակցության ցածր մակարդակ: Մասնակցության ցածր մակարդակը տեղեկատվության պակասն է: Ժամանակակից տեխնիկական սարքավորումների բացակայությունը հանգեցրել է ընդհանուր նիստերի հեռարձակման վատ որակի: Առաջնային խնդիրների գերակայության պատճառով առկա է տեղեկատվության արդյունավետ տարածման խնդիր: Առկա վիդեոկամերայի մաշվածությունը բերել է հեռարձակումների ձայնային վատ որակի: Շենքային պայմանները ևս հասանելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:
6. Ո՞րն է ձեր ծրագրի նպատակը:	Նպաստել բնակիչների մասնակցության աճին՝ համայնքում որոշումների ընդունման գործընթացների թվայնացման, հասանելիության բարելավման և բնակիչների շրջանում իրազեկության բարձրացման միջոցով:
7. Որո՞նք են ձեր ծրագրի խնդիրները:	1) Բարելավել հեռարձակման որակը՝ գործիքակազմի արդիականացման միջոցով: 2) Բարձրացնել բնակչության իրազեկությունը ավագանիների գործառույթների՝ ՏԻՄ թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ: 3) Ավագանու նիստերի առցանց և անցանց մասնակցության հասանելիության ապահովում՝ նիստերի հեռարձակման, խոցելի խմբերի համար համայնքապետարանի թեքահարթակի բարեկարգման միջոցով:
8. Նկարագրեք թիրախային խմբերը, որոնք տուժում են խնդրից:	Համայնքի բնակիչները, մասնավորապես, խոցելի խմբերը՝ տարեցներ, Լեռնային Ղարաբաղից փախստականներ, երիտասարդներ, կանայք:
9. Ինչպե՞ս եք նախատեսում նպաստել նշված հիմնախնդրի լուծմանը *(մանրամասն նկարագրեք բոլոր նախատեսվող քայլերը/գործողությունները օգտվելով հայտի մեջ նշված թեմատիկ ուղղությունների*	1) Բարելավել հեռարձակման որակը՝ գործիքակազմի արդիականացման միջոցով: **1.1 Սարքավորումների ձեռքբերման և գնման գործընթացի կազմակերպում:** Ավագանու նիստերն անցկացվող նիստերի դահլիճի կահավորման համար նախատեսվում է ձեռք բերել

նկարագրությունից): Եղեք ստեղծագործ եւ իրատեսական:	- բարձրախոսներ՝ դինամիկներով, 10 հատ, - պրոյեկտոր և պրոյեկտորի էկրան՝ դիտակտիկ նյութեր ցուցադրելու նպատակով, - smart հեռուստացույց՝ քաղաքացիների մեկ պատուհան գրասենյակին կից ցուցադրելու համայնքի նորությունները, կատարված աշխատանքներն ու ավագանու նիստերի առցանց հեռարձակումները: **1.2 Նիստերի դահլիճի տեխնիկական վերազինում:** Ձեռքբերված գույքի տեղադրում ու դահլիճի կահավորում: 2) Բարձրացնել բնակչության իրազեկությունը ավագանիների գործառույթների՝ ՏԻՄ թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ: **2.1 QR կոդերի ստեղծում և տեղեկատվական վահանակների տեղադրում հասանելի վայրերում:** Նախատեսվում է համայնքի տարածքում տեղադրել hrazdan.am կայք տանող QR կոդով ու եռալեզու տեղեկատվությամբ 3 վահանակ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել քաղաքացիների իրազեկվածության մակարդակը: Բացի այն, որ կծանոթանան համայնքի պատմությանը, նաև կիրազեկվեն համայնքում տեղի ունեցող իրադարձություններին, կակտիվանա համայնքի կայքէջը, ավագանու նիստերի օնլայն դիտումների քանակը կավելանա: **2.2 Քաղաքացիական ակտիվ խմբի ձևավորում, իրազեկում և հանրային արշավների կազմակերպում:** Համագործակցելով համայնքում ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ, օգտագործելով համայնքի կամավորական ներուժը՝ կստեղծվի քաղաքացիական ակտիվ խումբ՝ մինչև 15 հոգուց բաղկացած (երիտասարդներ, կանայք, տարեցներ, հենաշարժողական խնդիրներ ունեցողներ, Լեռնային Ղարաբաղից փախստականներ), որոնք կմասնակցեն ավագանու նիստերին, կպատրաստվեն և կտարածվեն նաև ՏԻՄ գործառույթների վերաբերյալ սոցիալական հոլովակներ: Գործընթացը կկրի շարունակական բնույթ՝ բարձրացնելով բնակիչների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: 3) Ավագանու նիստերին ֆիզիկական մասնակցության հասանելիության ապահովում՝ խոցելի խմբերի համար

	համայնքապետարանի 2 թեքահարթակների բարեկարգման միջոցով: **3.1 Համայնքապետարանի շենքի առաջին հարկում՝ քաղաքացիների մեկ պատուհան գրասենյակին կից smart հեռուստացույցի տեղադրում:** Ձեռքբերված խելացի հեռուստացույցի տեղադրում քաղաքացիների մեկ պատուհան գրասենյակին կից, քանի որ օրական նվազագույնը 70-100 քաղաքացի սպասարկվում է: Արդյունքում քաղաքացիները հնարավորություն կստանան տեղեկանալու համայնքի նորություններին, կատարված աշխատանքներին ու հնարավորություն կստանան հետևելու ավագանու նիստերի օնլայն հեռարձակումներին:
10. Ի՞նչ արդյունքի եք ակնկալում հասնել ծրագրի իրականացման արդյունքում: Արդյունքները պետք է արձագանքեն ներկայացված խնդիրներին:	Ծրագրի իրականացման արդյունքում կկարողանանք հասնել հետևյալ արդյունքների՝ 1. Ավագանու նիստերի դահլիճը կարդիականացվի նոր սարքավորումներով՝ բարձրախոսներով, պրոյեկտորով, պրոյեկտորի էկրանով, սմարթ հեռուստացույցով: Հետևաբար, կբարելավվի ավագանու նիստերի հեռարձակման որակը: 2. Նախատեսված վայրերում կտեղադրվեն QR կոդով և եռալեզու տեղեկատվական (3) վահանակներ՝ ավագանու գործառույթների, տեղական ինքնակառավարման թափանցիկության և հաշվետվողականության մասին բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: 3. Կպատրաստվեն և կտարածվեն նաև 5 սոցիալական հոլովակներ ՏԻՄ գործառույթների վերաբերյալ: 4. Ավագանու նիստերին մասնակցելու և բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու համար կձևավորվի ակտիվ քաղաքացիական 1 խումբ: 5. Ավագանու նիստերին համայնքի բնակիչների կողմից հասանելիությունը կբարձրանա և խոցելի խմբերի ֆիզիկական ներկայությունը կապահովվի 2 թեքահարթակներ տեղադրելու միջոցով: 6. Քաղաքացիների համար կտեղադրվի 1 smart հեռուստացույց, որը թույլ կտա քաղաքացիներին ծանոթանալ համայնքի նորություններին և դիտել ավագանու նիստերի առցանց հեռարձակումները:

11. Ո՞ւմ եք ներգրավելու ծրագրի իրականացմանը: Ովքե՞ր են ձեր թիմակիցները համայնքում եւ համայնքից դուրս:	Համագործակցելու ենք համայնքապետարանի աշխատակազմի, ՀՈԱԿ-ների, համայնքում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ:
12. Ի՞նչ ռեսուրսներ են առկա ձեր համայնքում, որ կնպաստեն ձեր ծրագրի իրագործմանը:	• Համայնքապետարանի աշխատակազմի աջակցություն • Տարածք՝ վահանակների տեղադրման համար • Ոլորտային անհրաժեշտ մասնագետներ
13. Ինչպե՞ս եք նախատեսում ապահովել ծրագրի կայունությունը ֆինանսավորման ավարտից հետո:	Ծրագիրը կունենա երկարաժամկետ արդյունք: Ավագանու նիստերի որակի ապահովումը կբերի բնակիչների կողմից մասնակցության բարձրացման և նախագծերի նկատմամբ հետաքրքրության առաջացման, որն էլ կնպաստի իրենց կողմից համայնքային խնդիրների բարձրաձայնմանը և նոր նախագծերի հնարավոր առաջադրմանը:
